

Է.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ,
Լ. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ա.Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

**ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

ՖԵՐՄԵՐ

ԴԱՍԱԽՈՍԻ ՁԵՌՆԱՐԿ



2012

ՀՏԴ 63 (072)

ԳՄԴ 4

Ղ 158

Ղազարյան Է. Ս.

Ղ 158 Գյուղացիական տնտեսության կազմակերպում: Ֆերմեր:

Դասախոսի ձեռնարկ/Է. Ս. Ղազարյան, Լ. Ա. Խաչատրյան, Ա. Ս. Մնացականյան.

- Եր.: Տիգրան Մեծ, 2012.- 52 էջ:

Ձեռնարկը հանդիսանում է «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» գրքի դասավանդման ուղեցույց: Այն ներառում է դասագրքում ներկայացված թեմաների ուսուցման մեթոդիկան, առաջադրանքների լուծման օրինակներ, թեմաների ամփոփման և գիտելիքների գնահատման համար նախատեսված հարցեր:

Սույն ձեռնարկը նախատեսված է միջին մասնագիտական կրթության «3112 - Գյուղացիական տնտեսության կազմակերպում» մասնագիտությամբ (որակավորումը՝ «Ֆերմեր») դասախոսների համար: Ձեռնարկը մշակված է համապատասխան պետական որակավորման չափորոշի պահանջներին համաձայն:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդողների համար, ինչպես նաև գյուղացիական տնտեսության ոլորտի աշխատողների համար:

Ձեռնարկը մշակվել և տպագրվել է ՄԱԶԾ «Օժանդակում նախնական և միջին մասնագիտական կրթության բարեփոխումներին» ծրագրի աջակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Դանիայի կառավարության կողմից և իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ: Ծրագրի նպատակն է նպաստել նախնական և միջին մասնագիտական կրթության բարելավմանը: Ծրագրի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, ինչպես նաև ձեռնարկի էլեկտրոնային տարբերակի համար կարող եք այցելել ինտերնետային կայքը՝ www.vet.am:



*Empowered lives.
Resilient nations.*

ՀՏԴ 63 (072)

ԳՄԴ 4

ISBN 978-99941-0-474-1

© Հեղինակների խումբ, 2012

© ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, 2012

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայացվող ձեռնարկը նախատեսված է որպես «Գյուղացիական տնտեսության կազմակերպում /Ֆերմեր/» գրքի դասավանդման ուղեցույց: Ձեռնարկը կօժանդակի դասախոսին դասագրքում ներառված թեմաների մատուցմանը: Այստեղ ներկայացված են դասագրքի թեմաների ուսուցման մեթոդիկան, առաջադրանքների լուծման եղանակները, թեմաների ամփոփման և գիտելիքների գնահատման համար նախատեսված հարցերը: Ձեռնարկում զետեղված են նաև թեմաների վերաբերյալ լրացուցիչ նյութեր, թեմաներն ամփոփող աղյուսակներ, որոնք կհեշտացնեն նյութի յուրացումը:

Ձեռնարկի յուրաքանչյուր բաժնում տրված են դասագրքում ներկայացված համապատասխան թեմայի վերաբերյալ առաջադրանքներից բարդ օրինակների լուծումներ, մյուս առաջադրանքների լուծման համար անհրաժեշտ նորմատիվային տվյալներ, տեխնոլոգիական ցուցանիշներ:

Դասախոսի աշխատանքը հեշտացնելու համար թեմաներում որոշ ցուցանիշների դասակարգումը տրված է սխեմաների տեսքով, որոնք կարող են ծառայել որպես դիդակտիկ նյութեր:

Որոշ թեմաներում ներկայացված են հանրապետության գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալներ, խմբավորումներ, որոնք տեսանելի և շոշափելի են դարձնում դասագրքի տեսական նյութը: Դասախոսը նույն սկզբունքով կարող է համալրել և թարմացնել տվյալները՝ դրանով իսկ հարստացնելով դասավանդվող թեման: Ներկայացված է նաև առաջարկվող գրականության ցանկ, որը լրացուցիչ աղբյուր է նյութի մատուցման համար:

Հեղինակները հուսով են, որ ձեռնարկն օգտակար կլինի ուսուցման դժվար գործընթացին և կնպաստի գյուղատնտեսության ոլորտում բարձրորակ ֆերմերների պատրաստմանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Ներկայացվող առաջին թեման սեփականաշնորհումից հետո գյուղատնտեսությունում ձևավորված կազմակերպությունների կազմակերպատիրավական ձևերն են: Թեմայի ուսումնասիրման ժամանակ պետք է ներկայացնել կազմակերպությունների բոլոր հնարավոր ձևերից գյուղատնտեսությունում գործողները: Գյուղատնտեսությունում ձևավորված տնտեսությունների մեջ գերակշռում են գյուղացիական տնտեսությունները:

Թեմայի ուսումնասիրության ժամանակ կարելի է ցույց տալ հանրապետության մարզերի կտրվածքով ձևավորված գյուղացիական տնտեսությունները, դրանց տարբերությունները: Գյուղացիական տնտեսությունների ձևավորումը պետք է կապել գյուղատնտեսությունում իրականացված սեփականաշնորհման գործընթացի հետ՝ նշելով հողի սեփականաշնորհման և արտադրության միջոցների մասնավորեցման գործընթացի բացթողումները, որոնք դեռ շտկման փուլում են:

Հանրապետության մարզերում գյուղացիական տնտեսությունները համեմատելու համար որպես տարբերիչ գծեր կարելի է վերցնել մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին ընկնող գյուղատնտեսական նշանակության հողատարածության չափը, պայմանական անասնազխաքանակը, ուղղաձիգ գոտիականության նշանակությունը, մշակվող մշակաբույսերի տեսակազմը, արտադրության միջոցներով հագեցվածությունը, մայրաքաղաքից՝ որպես գյուղատնտեսական մթերքների լայն սպառման գոտի, ունեցած հեռավորությունը և այլն: Նշված ցուցանիշներով գյուղացիական տնտեսությունների տարբերություններն ակնհայտ են, հատկապես, երբ համեմատվում են հանրապետությունում ամենաքիչ և ամենաշատ հողատարածք ունեցող մարզերի տնտեսությունները /աղյուսակ 1/: Նույն ձևով կարելի է համեմատել մարզում տարբեր համայնքների գյուղացիական տնտեսությունները:

Քննարկելով գյուղացիական տնտեսությունների դժվարությունները՝ կապված հողակտորների փոքր չափերի, արտադրության միջոցների թերզինվածության հետ, կարելի է ցույց տալ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների առավելությունները, քննարկման միջոցով պարզել գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման առանձնահատկությունները և հնարավոր ուղիները:

Այս թեմայի ուսումնասիրության ժամանակ պետք է զուգահեռ օգտագործել Հայաստանի Հանրապետության օրենքը «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» /22.01.1991 թ./, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքը հողի հարկի մասին /14.02.1994/:

Գյուղացիական տնտեսությունների չափերն ըստ ունեցած հողատարածության և մեկ տնտեսությանը բաժին ընկնող տավարի գլխաքանակի *

Մարզերը	Տարածքը, քառ.կմ	Գյուղատնտեսական նշանակության հողեր, հա	Այդ թվում վարելահող, հա	Գյուղացիական տնտեսություն	Մեկ գյուղ. տնտեսության ընկնում է					
					Գյուղատնտեսական հող.	Այդ թվում		Պայմանական անասուն, գլ.	այդ թվում	որից
						վարելահող, հա	խոտհարք, հա			
Արարատ	2096	156706	26953	58973	0.62	0.44	0.01	0.89	0.81	0.38
Արմավիր	1242	79049	39399	60011	0.95	0.68	0.01	0.87	0.84	0.37
Շիրակ	2681	229636	79822	71381	2.37	2.27	0.10	3.07	3.23	1.56
Սյունիք	4506	333598	43970	39514	3.08	2.74	0.28	3.87	3.92	1.96

* ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2004-2008թ.»։ / Վիճակագրական ժողովածու, Երևան, 2009.- 279 էջ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Շուկայական տնտեսության պայմաններում հիմնական տնտեսվարող սուբյեկտները տարբեր կազմակերպարավական ձևերի կազմակերպություններն են։ Այս առումով կարևոր է ֆերմերների պատրաստման գործընթացում ուսումնասիրել դրանց ձևերը, տարբերությունները և առանձնահատկությունները։

Առաջարկվում է առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները ներկայացնել սխեմատիկորեն՝ ուսանողների տեսողական ընկալումը և սօգտագործելու նպատակով։

Անհրաժեշտ է նաև պարզաբանել արտադրական և սպառողական կոոպերատիվների տարբերությունները՝ բերելով կոնկրետ օրինակներ, քանի որ մի դեպքում կոոպերատիվը հանդես է գալիս որպես առևտրային կազմակերպություն, մյուս դեպքում՝ ոչ առևտրային, և դա ուսանողի մոտ կարող է շփոթություն առաջացնել։ Ոչ առևտրային կոոպերատիվներ են, օրինակ՝ հանրապետությունում գործող կաթի հավաքման սպառողական կոոպերատիվները և սառնարանային կոոպերատիվները։

Առաջարկվում է առանձնակի ուշադրություն դարձնել բաց և փակ բաժնետիրական ընկերությունների միջև առկա տարբերություններին։

Քանի որ ուսանողն իր առօրյա կյանքում հաճախակի առնչվում է առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությանը, դասախոսը կարող է նախ առաջարկել ուսանողներին ինքնուրույն տալ յուրաքանչյուր կազմակերպարավական ձևի կազմակերպության սահմանումը, այնուհետև պարտադիր կատարել շտկումներ և թելադրել ճիշտ սահմանումը:



Թեման կարելի է ամփոփել ուսանողների հարցումով՝ նախօրոք մշակման համար հանձնարարելով հետևյալ հարցերը.

1. Ինչ է գյուղացիական տնտեսությունը:
2. Ինչ է գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը:
3. Որո՞նք են գյուղացիական կոլեկտիվ տնտեսության առավելությունները գյուղացիական տնտեսության համեմատ:
4. Ինչպե՞ս են փոխվում գյուղացիական տնտեսությունների չափերը հանրապետության մարզերում:

5. Որո՞նք են ներկա փուլում գյուղացիական տնտեսությունների հիմնական խնդիրները:
6. Ի՞նչ հարցեր են ընդգրկված գյուղացիական կոլեկտիվ տնտեսության օրինակելի կանոնադրության մեջ:
7. Ի՞նչ էք հասկանում ձեռնարկություն ասելով:
8. Ո՞րն է առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջև եղած հիմնական տարբերությունը:
9. Ի՞նչ էք հասկանում տնտեսական ընկերություն ասելով:
10. Թվարկել տնտեսական ընկերության անդամների իրավունքները:
11. Ի՞նչ կազմակերպությունների տեսքով կարող են հանդես գալ տնտեսական ընկերությունները:
12. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների առավելությունները:
13. ԼՊԸ-ի և ՍՊԸ-ի տարբերությունները:
14. Տալ բաժնետիրական ընկերության սահմանումը:
15. Բացատրել փակ և բաց բաժնետիրական ընկերությունների տարբերությունները:
16. Թվարկել արտադրական կոոպերատիվի առավելությունները:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու համար հողը համարվում է անփոխարինելի արտադրամիջոց և ունի որոշակի առանձնահատկություններ: Ուսանողներին կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի դասակարգումն ըստ նպատակային նշանակության.

- գյուղատնտեսական նշանակության,
- բնակավայրերի,
- արդյունաբերության, ընդերքի օգտագործման և այլ արտադրական նշանակության,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների,
- հատուկ պահպանվող տարածքների,
- հատուկ նշանակության,
- անտառային,
- ջրային:


Թեման ավելի մատչելի կդառնա և հիշվող, եթե այն պարզաբանվի հարցերի և կոնկրետ օրինակների միջոցով: Այս մեթոդով ուսուցանելու դեպքում դասավանդողը թեման ներկայացնում է ոչ թե տեսական նյութով, այլ կոնկրետ հարցերի միջոցով: Ուսանողի պատասխանում ճշտումներ կատարելով՝ դասավանդողը տալիս է հարցի սպառիչ պատասխանը: Գյուղատնտեսությունում հողի առանձնահատկությունները պետք է թվարկեն

ուսանողները՝ իրենց ուղղված հարցերի պատասխաններում: Հողի երկակի բնույթը ցույց տալու համար կարելի է բերել հողի մշակության որևիցե մի օրինակ. գյուղատնտեսական տեխնիկայով ներգործում ենք հողի վրա, իսկ հողն էլ իր հերթին ներգործում է սերմի վրա և ստանում ենք արտադրանք: Կամ էլ, գյուղատնտեսական տեխնիկան՝ տրակտորը և հողը համարվում են արտադրության միջոցներ, նրանց համեմատության արդյունքում ուսանողը կհայտնաբերի հողի անտեղափոխելի լինելու և չմաշվելու առանձնահատկությունները:

Ուսուցման գործընթացում բարձր արդյունք ստանալու համար կարելի է օգտագործել նաև ուսանողների տեսողական հիշողությունը: Թեմայում տրվող ցուցանիշները, առանձնահատկությունները, դասակարգումները տալ սխեմաներով, գծապատկերներով: Օրինակ՝ գյուղատնտեսական հողատեսքերի դասակարգումը ստանալու նպատակով կարելի է գրատախտակը բաժանել չորս հավասար մասերի և ուսանողների կողմից թվարկված մշակաբույսերը դասավորել խմբերում: Ստացված խմբերը կլինեն հողատեսքերը՝ ըստ արտադրական ուղղության.

ցորեն լոլիկ կարտոֆիլ ծխախոտ	խաղող ծիրան դեղձ խնձոր	առվույտ կորնգան լյուպին	արոտային կերեր կանաչ խոտ
վարելահող	բազմամյա տնկարկ	խոտհարք	արոտավայր

Թեմայում ուսանողներին պետք է ներկայացնել նաև հողամասերի պետական հաշվառման կարգը: Պետական հաշվառման կազմակերպման կարգը սահմանում է կառավարությունը: Պետական հաշվառման իրականացման նպատակն է հողամասերի և դրանց վրա անրակայված անշարժ գույքի որակի ու քանակի, սեփականության և օգտագործման վերաբերյալ ստանալ ամփոփված, ամբողջական տվյալներ: Հաշվառումն իրականացվում է մի քանի մակարդակով՝ գյուղապետարան, մարզպետարան, որոնք սահմանված ժամկետում ամփոփ տվյալները ներկայացնում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե: Հաշվառման գործընթացին մասնակցում են գյուղատնտեսության և մյուս պետական նախարարություններն ու գերատեսչությունները: Հողամասերի պետական հաշվառման արդյունքում կազմվում է հանրապետության հողային ֆոնդի հաշվեկշիռը, որը հաստատում և հրապարակում է կառավարությունը: Վերահսկողությունն անմիջականորեն իրականացնում են պետական լիազոր մարմինը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք ունեն որոշակի պարտականություններ և իրավունքներ:



Սակավահող հանրապետությունում կարևորվում է գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործումը, որոնց բնութագրող ցուցանիշների հաշվարկման համար ուսանողը կարող է օգտվել «Գյուղատնտեսական արտադրության արդյունքային և արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները» թեմայից:

Թեմայի ուսումնասիրության ժամանակ պետք է օգտվել Հայաստանի Հանրապետության հողի հարկի մասին օրենքից /14.02.1994/, ուսանողներին որպես ինքնուրույն առաջադրանք կարելի է հանձնարարել հողի հարկի մասին արտոնությունների սահմանման պայմանները:

Առաջադրանք 1. Լուծման համար ուսանողից պահանջվում է հաշվարկել գյուղացիական տնտեսությունների հողօգտագործման արդյունավետությունը բնութագրող 2 հիմնական ցուցանիշ՝ 1 հա գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվով համախառն արտադրանքի և համախառն եկամտի ելքը:

Առաջադրանք 2. Գնահատել 2 գյուղացիական տնտեսությունների հողօգտագործումը հետևյալ ելակետային տվյալների հիման վրա.

աղյուսակ 1 /առաջադրանք 2/

Ելակետային տվյալներ

h/h	Ցուցանիշները	չափի միավոր	1-ին գ.տնտ.	2-րդ գ.տնտ.
1	գյուղ. նշան. հողեր	հա	8	10
2	համախառն արտադրանք	հազար դրամ	22 000	25 000
3	ապրանքայնությունը	%	90	95
4	սյութական ծախսեր	հազար դրամ	8 500	9 200
5	արտադրական ծախս /ներառյալ իրացման հետ կապված ծախսերը/	հազար դրամ	11 000	14 500

Առաջադրանքի լուծման համար ուսանողից պահանջվում է հաշվարկել հետևյալ ցուցանիշները.

1. միավոր հողատարածությունից /1 հեկտար/ ստացվող համախառն արտադրանքի արժեքը,
2. միավոր հողատարածությունից /1 հեկտար/ ստացվող ապրանքային արտադրանքի արժեքը,
3. միավոր հողատարածությունից /1 հեկտար/ ստացվող համախառն եկամուտը,
4. միավոր հողատարածությունից /1 հեկտար/ ստացվող շահույթը,
5. շահութաբերության մակարդակը:

1 հեկտարից ստացվող համախառն արտադրանքի արժեքը ստանալու համար յուրաքանչյուր տնտեսության ՀԱ հարաբերում են գյուղատնտեսական նշանակության հողերին.

1-ին գ.տ. $22000 / 8 = 2750$ հազար դրամ

2-րդ գ.տ. $25000 / 10 = 2500$ հազար դրամ

Ինչպես տեսանք, 1-ին գ.տ. 1 հա-ի հաշվով ավելի շատ համախառն արտադրանք է ստացել, քան 2-րդ գ.տ.: Եթե չհաշվարկվեր այս ցուցանիշը, ապա պատկերը կլիներ հակառակը: Առաջադրանքում պահանջվում է հաշվարկել և վերլուծել ցուցանիշները: Վերլուծությունը կարող է տրվել մի քանի տարբերակով, օրինակ՝ հաշվարկային ցուցանիշների բացարձակ փոփոխությունը, այս դեպքում կլինի՝ 1-ին գ.տ. 2-րդ գ.տ. համեմատությամբ 1 հա գյուղատնտեսական հողատարածությունից ստացել է 250 հազար դրամի ավելի համախառն արտադրանք: Կարող է փոփոխությունը ցույց տրվել տոկոսներով՝ 1-ին գ.տ. 2-րդ գ.տ. համեմատությամբ 1 հա գյուղատնտեսական հողատարածությունից ստացել է 10 % ավելի համախառն արտադրանք: Հաշվարկային յուրաքանչյուր ցուցանիշ պետք է նման ձևով վերլուծել:

1 հեկտարից ստացվող ապրանքային արտադրանքի արժեքը հաշվարկելու համար պետք է ԱԱ / գյուղ.հող.: Ելակետային ցուցանիշներում չկա ԱԱ, բայց դրա հաշվարկման համար կարող ենք օգտվել Ա^ո ցուցանիշից.

$ԱԱ = ՀԱ \times Ա^{\circ}\%$

1-ին գ.տ. $ԱԱ = 22000 \times 90 \% = 19800$ հազար դրամ

$19800 / 8 = 2475$ հազար դրամ

2-րդ գ.տ. $ԱԱ = 25000 \times 95 \% = 23750$ հազար դրամ

$23750 / 10 = 2375$ հազար դրամ

Այս նույն ցուցանիշը կարող ենք հաշվել նաև 1 հա ստացված ՀԱ ապրանքայնությամբ՝

1-ին գ.տ. $ԱԱ = 2750 \times 90 \% = 2475$ հազար դրամ

2-րդ գ.տ. $ԱԱ = 2500 \times 95 \% = 2375$ հազար դրամ

1 հեկտարից ստացվող համախառն եկամուտը հաշվելու համար
ՀԵ = ՀԱ - ՆԾ

ՀԵ = ՀԱ - ՆԾ

1-ին գ.տ. ՀԵ = 22000 - 8500 = 13500 հազար դրամ

13500 / 8 = 1687.5 հազար դրամ

2-րդ գ.տ. ՀԵ = 25000 - 9200 = 15800 հազար դրամ

15800 / 10 = 1580 հազար դրամ

1 հեկտարից ստացվող շահույթը հաշվելու համար Շ/ գյուղ.հող.:

Շ = ԱԱ - ԱԾԼ

1-ին գ.տ. Շ = 19800 - 11000 = 8800 հազար դրամ

8800 / 8 = 1100 հազար դրամ

2-րդ գ.տ. Շ = 23750 - 14500 = 9250 հազար դրամ

9250 / 10 = 925 հազար դրամ

Շահութաբերության մակարդակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\mathcal{C}_p = \frac{\mathcal{C}}{\text{ԱԾ}_L} \times 100$$

1-ին գ.տ. $\mathcal{C}_p = \frac{8800}{11000} \times 100 = 80 \%$

2-րդ գ.տ. $\mathcal{C}_p = \frac{9250}{14500} \times 100 = 64 \%$

Շահութաբերությունը ցույց է տալիս կատարված ամբողջ ծախսերի փոխհատուցումը, կամ թե կատարված միավոր ծախսի դիմաց որքան շահույթ է ստացվել: 1-ին գ.տ. յուրաքանչյուր 100 դրամի հաշվով ստացել է 80 դրամ շահույթ, իսկ 2-րդ գ.տ.՝ 64 դրամ շահույթ: Հետևաբար, չնայած 2-րդ գ.տ. ունի ավելի բարձր արդյունքային ցուցանիշներ, սակայն 1-ին գ.տ. ավելի արդյունավետ է աշխատել՝ 100 դրամ ծախսերի հաշվով ստացել է 16 դրամ ավելի շահույթ, քան 2-րդ գ.տ.:

Առաջադրանք 3 Տալ ձևավորված ցանքատարածությունների կառուցվածքի տնտեսական գնահատականը: Այս առաջադրանքում տրված ցանքատարածությունում ներառված են պարենային և կերային մշակաբույսեր: Հետևաբար ցանքատարածությունների կառուցվածքի հիմնավորումը պետք է տրվի հետևյալ ցուցանիշներով.

1. միավոր հողատարածությունից /1 հեկտար/ ստացվող համախառն արտադրանքի արժեքը,

2. միավոր հողատարածությունից /1 հեկտար/ ստացվող համախառն եկամուտը,

3. միավոր հողատարածությունից /1 հեկտար/ ստացվող կերամիավորները:

Ցանքատարածությունների կառուցվածքի գնահատման աղյուսակում հաշվարկային սյուններից 4-րդը ցույց է տալիս ցանքատարածության կառուցվածքը, թե յուրաքանչյուր մշակաբույս ընդհանուր հաղատարածության մեջ ինչ տեսակարար կշիռ ունի՝ %:

Հաշվարկային 6-րդ սյունում համախառն բերքը ստանալու համար յուրաքանչյուր մշակաբույսի զբաղեցրած տարածությունը բազմապատկում ենք բերքատվությամբ: Միջին բերքատվության և համախառն բերքի սյուների ընդամենը ցուցանիշը հնարավոր չէ հաշվել, քանի որ այդ ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ են:

Հաշվարկային 9-րդ սյունը համախառն արտադրանքի հաշվարկն է, որը ստանալու համար պետք է յուրաքանչյուր մշակաբույսի զբաղեցրած հողատարածքը բազմապատկել միջին բերքատվությամբ՝ ստանալով համախառն բերքը /6-րդ սյուն/ և բազմապատկել 1 ց իրացման գնով: Այս սյան ընդամենը տողը հաշվարկվում է սյան ցուցանիշների գումարով:

10-րդ սյան պահանջը համախառն եկամտի հաշվարկն է, որը կարելի է հաշվել կամ 1 ց իրացման գնի և 1 ց նյութական ծախսերի տարբերությունը բազմապատկելով համախառն բերքով, կամ համախառն արտադրանքի արժեքից հանել ընդամենը նյութական ծախսերը՝ (1 ց նյութական ծախսի և համախառն բերքի արտադրյալը): Այս սյան ընդամենը տողը հաշվարկվում է սյան ցուցանիշների գումարով:

12-րդ սյունում պահանջվում է հաշվարկել կերային մշակաբույսերի համար կերամիավորների ընդհանուր քանակը, այսինքն՝ կերային մշակաբույսի զբաղեցրած տարածությունը բազմապատկում ենք միջին բերքատվությամբ՝ ստանալով համախառն բերքը, և բազմապատկում 1 ց կերում կերամիավորների պարունակությամբ: Քանի որ կերամիավորը պայմանական միավոր է, հետևաբար այս սյան ընդամենը տողը հաշվարկվում է սյան ցուցանիշների գումարով:

13-րդ սյունը 1 հա-ից համախառն արտադրանքի ելքն է, որը ցանքատարածությունների արդյունավետությունը գնահատող ցուցանիշներից է, կարելի է հաշվարկել մի քանի ձևով՝ 1 հա միջին բերքատվությունը բազմապատկելով 1 ց արտադրանքի իրացման գնով, կամ էլ համախառն արտադրանքը բաժանել տվյալ մշակաբույսի զբաղեցրած տարածությանը: Այս սյան համար վերջում հաշվարկվում է 1 հա-ից համախառն արտադրանքի միջին ելքը, որը ստանալու համար համախառն արտադրանքի ընդամենը ցուցանիշը բաժանում ենք ընդհանուր ցանքատարածության վրա:

14-րդ սյունը 1 հա-ից համախառն եկամտի ելքն է, որը ցանքատարածությունների արդյունավետությունը գնահատող ցուցանիշներից է, կարելի է հաշվարկել մի քանի ձևով. համախառն եկամուտը բաժանել տվյալ մշակաբույսի զբաղեցրած տարածությանը, կամ էլ 1 հա միջին բերքատվությունը բազմապատկել 1 ց արտադրանքի իրացման գնի և նյութական ծախսերի տարբերությանը: Այս սյան համար վերջում հաշվարկվում է 1 հա համախառն եկամտի միջին ելքը, որը ստանալու համար համախառն եկամտի ընդամենը ցուցանիշը բաժանում ենք ընդհանուր ցանքատարածության վրա:

Ելակետային տվյալներ

	Մշակաբույսերի անվանումը	Տարածությունը		5.	6.	1գ-ի		Ստացվել է		Կերատեսակի		1 հա-ի հաշվով ստացվել է			/մն շեմ/ մեզրով ուղիղ ճանապարհով քաղցրահամի մի ր/հ 6 և
		հա	%			7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	15.	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	15.	16.
1.	Աշնանացան ցորեն	4	40	50.0	200	7.0	11.0	2200.0	800.0	-	-	550.0	200.0	-	-
2.	Վարունգ	0.5	5	300.0	150	8.0	10.0	1500.0	300.0	-	-	3000.0	600.0	-	-
3.	Լոլիկ	1.5	15	450.0	675	5.0	8.0	5400.0	2025.0	-	-	3600.0	1350.0	-	-
4.	Առվույտ	2	20	150.0	300	3.0	5.0	1500.0	600.0	0.6	180	750.0	300.0	90	5
5.	Եգիպտացորեն սիլոսի Շրթամենը	2	20	200.0	400	1.5	2.0	800.0	200.0	0.25	100	400.0	100.0	50	6
6.	Միջինը	10	100	*	*	*	*	11400.0	3925.0	*	280	1140.0	392.5	35	*

15-րդ սյունում հաշվարկվում է կերային մշակաբույսերի 1 հա-ից կերամիավորների ելքը, որը հաշվելու համար պետք է տվյալ մշակաբույսից ստացվող կերամիավորները բաժանել տվյալ մշակաբույսի զբաղեցրած տարածությանը: Այս սյան համար վերջում հաշվարկվում է 1 հա-ից կերամիավորների միջին ելքը, որը ստանալու համար ընդամենը կերամիավորներ ցուցանիչը բաժանում ենք միայն կերային մշակաբույսերի զբաղեցրած տարածության վրա:

16-րդ սյունում հաշվարկվում է կերային մշակաբույսերի 1 ց կերամիավորի վրա կատարված նյութական ծախսերը: Դրա համար 1 ց կերի արտադրության վրա կատարված նյութական ծախսերը բաժանում ենք կերամիավորների գործակցին:

Ցանքատարածությունների կառուցվածքը գնահատելով՝ որոշում ենք պարենային և կերային մշակաբույսերի մեջ ամենաարդյունավետ մշակաբույսը: Պարենային մշակաբույսերի գնահատման ժամանակ հիմք ենք ընդունում 1 հա-ից ստացվող համախառն արտադրանքը և համախառն եկամուտը, իսկ կերայինի համար՝ 1 հա կերամիավորների ելքը և 1 ց կերամիավորի հաշվով նյութական ծախսերը:

Մեր օրինակում պարենային մշակաբույսերից ամենաարդյունավետը լուլիկն է, իսկ կերային մշակաբույսերից՝ առվույտը: Այս գնահատման շնորհիվ հաջորդ տարվա համար պետք է կազմել նոր ցանքատարածության կառուցվածք, այսինքն՝ գյուղացիական տնտեսության ունեցած հողատեսքը մնում է 10 հա, սակայն դրա մեջ փոխվում են մշակաբույսերի զբաղեցրած տարածությունները՝ տեսակարար կշիռները: Այս դեպքում պետք է ավելացնել լուլիկի մշակության տարածքը պակաս արդյունավետ մշակաբույսի զբաղեցրած տարածքի հաշվին /աշնանացան ցորեն/: Պակաս արդյունավետ մշակաբույսի տարածքը կարելի է կրճատել մինչև թույլատրելի սահմանը՝ սահմանափակումը: Որպես սահմանափակում կարող է լինել, օրինակ՝ ներտնտեսային կարիքների համար պահանջվող հացահատիկի քանակը, այսինքն՝ աշնանացան ցորենի տարածությունը պակասեցնել այն հաշվով, որ այդ տարածությունից ստացվի ցորենի պահանջվող քանակը: Մնացած տարածությունը պետք է տրամադրվի ավելի արդյունավետ մշակաբույսին՝ լուլիկին:


Թեման կարելի է ամփոփել ուսանողների հարցումով՝ նախօրոք մշակման համար հանձնարարելով հետևյալ հարցերը.

1. Որո՞նք են գյուղատնտեսական հողերի առանձնահատկությունները:
2. Ի՞նչ է հողատեսքը, որո՞նք են գյուղատնտեսական հողատեսքերը:
3. Ո՞ր հողատեսքերն են համարվում ինտենսիվ և ինչո՞ւ:
4. Թվարկել հողի սեփականության ձևերը:
5. Ինչպե՞ս է սահմանվում հողի հարկը:
6. Ի՞նչ է ցանքատարածությունների կառուցվածքը և ի՞նչ ցուցանիչներով ենք գնահատում:
7. Ի՞նչ է ցանքաշրջանառությունը և ի՞նչ նպատակով է կազմվում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Յուրաքանչյուր արտադրական գործընթացի հիմքը աշխատանքն է: Կոնկրետ պայմաններում դրա քանակի և որակի սահմանումն իրականացվում է նորմավորման միջոցով: Ելնելով դրանից, ուսանողներին անհրաժեշտ է բացատրել նորմավորման գործընթացի կարևորությունը, նորմաների օգտագործման նշանակությունը:

Ուսանողը պետք է պատկերացում ստանա նորմաների գիտական հիմնավորման, նորմաների տեսակների, նորմավորման մեթոդների մասին: Նաև պետք է բացատրել, թե որ տեսակի նորման ինչպիսի իրավիճակում է նպատակահարմար սահմանել: Ուսանողը պետք է սովորի սահմանել նորմաներ տարբեր մեթոդներով և դրանց տարբեր եղանակներով:



Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի տարբեր աշխատանքային գործընթացներում նորմաների սահմանման եղանակների վրա: Այսպես,

օրինակ՝ դաշտային-մեքենայական աշխատանքներում և տրանսպորտային աշխատանքներում աշխատանքի նորման սահմանվում է տարբեր ձևերով:

Նախքան նորմավորման գործընթացին անցնելը, ուսանողները պետք է պատկերացում ունենան աշխատաժամանակի ծախսումների ուսումնասիրման եղանակների մասին: Անհրաժեշտ է բացատրել, թե ինչ աշխատանքների կամ գործողությունների համար են ծախսվում նախապատրաստական-եզրափակիչ, հանգստի, անձնական կարիքների ժամանակները, որոնք են օժանդակ և հիմնական աշխատաժամանակները: Ցանկալի կլինի բերել խրոնոգրաֆիայի և խրոնոմետրաժի օրինակներ, որպեսզի ուսանողին պարզ դառնա նորմատիվների սահմանման կարգը:

Նորմավորման գործընթացի ուսումնասիրման հաջորդ կարևոր քայլը յուրաքանչյուր տեսակի աշխատանքի համար նորմագոյացնող գործոնների բացահայտումն է: Ցանկալի է, որ այս հարցում ուսանողներն ինքնուրույնություն ցուցաբերեն:

Այս ամենից հետո կարելի է արդեն անցնել նորմավորման բանաձևերի ուսումնասիրմանը: Ընդ որում, ամենևին պարտադիր չէ, որ ուսանողն անգիր հիշի բանաձևերը, դրանք կարող են տրամադրվել նրան առաջադրանքների լուծման ընթացքում, սակայն կարևոր է, որ նա կարողանա ճիշտ գործածել տրված բանաձևերը:

Յուրաքանչյուր աշխատանքային գործընթացի օրինակով առաջադրանքի մեկական օրինակ պետք է բացատրվի դասախոսի կողմից և լուծվի նրա օգնությամբ, այնուհետև նմանատիպ խնդիր կարող է առաջարկվել ինքնուրույն լուծման համար: Այս թեման ուսումնասիրելիս ուսանողներին կարող են նաև խմբային առաջադրանքներ հանձնարարվել, որը կնպաստի խմբում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավմանը:

Ներկայացնենք մի քանի առաջադրանքների լուծման օրինակներ:

ա/ Աշխատանքի նորմայի սահմանումը ձեռքի աշխատանքներում:

Ձեռքի աշխատանքները բավականին մեծ տարածում ունեն չ՛ գյուղատնտեսությունում, որը պայմանավորված է տնտեսությունների փոքր չափերով, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ցածր մակարդակով, գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալության բարձր գներով, առանձին մշակաբույսերի մշակության առանձնահատկություններով:

Առաջադրանք 1.

Դիտարկման արդյունքներով բուկլից կատարելիս մեկ հերթափոխի ընթացքում նախապատրաստական-եզրափակիչ ժամանակը կազմել է 12 րոպե, տեխնիկական սպասարկման ժամանակը՝ օպերատիվ ժամանակի յուրաքանչյուր ժամի հաշվով 3 րոպե, հիմնական ժամանակը՝ 336 րոպե: Հանգստի ժամանակը սահմանվում է, ելնելով աշխատանքի բարդության աստիճանից՝

I - 4 րոպե

II - 6 բույս

III - 9 բույս

IV - 11 բույս

Նշված աշխատանքը ունի III աստիճանի բարդություն:

Անձնական կարիքների համար ընդմիջումների ժամանակի նորմատիվը կազմում է 10 բույս: Մեկ աշխատողը փաստացի կատարել է 216 մ² բույս-լից: Որոշել մեկ աշխատողի արտադրական նորման 7-ժամյա հերթափոխի պայմաններում:

Ձեռքի աշխատանքներում հերթափոխի արտադրական նորման հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{N}_{\text{հերթ.}} = \frac{T_{\text{հերթ.}} - (T_{\text{ն.ե.}} + T_{\text{ա.կ.}})}{60 + T_{\text{սպ.}} + T_{\text{հանգ.}}} \times W$$

որտեղ $T_{\text{հերթ.}}$ - հերթափոխի տևողությունն է, բույս,

$T_{\text{ն.ե.}}$ - հերթափոխի ընթացքում նախապատրաստական-եզրափակիչ ժամանակն է, բույս,

$T_{\text{հանգ.}}$ - հերթափոխի ընթացքում աշխատողների հանգստի տևողությունն է՝ օպերատիվ աշխատաժամանակի մեկ ժամի հաշվով, բույս,

$T_{\text{ա.կ.}}$ - հերթափոխում անձնական կարիքների համար հատկացվող ժամանակն է, բույս,

$T_{\text{սպ.}}$ - աշխատատեղի սպասարկման նորմատիվային ժամանակն է՝ օպերատիվ աշխատաժամանակի մեկ ժամի հաշվով, բույս,

W - աշխատանքի ժամային արտադրողականությունն է, միավոր/ժամ:

Նախ հաշվարկում ենք աշխատանքի ժամային արտադրողականությունը, որի համար փաստացի աշխատանքի ծավալը հարաբերում ենք հիմնական աշխատաժամանակին.

$$336\text{ր} / 60\text{ր} = 5.6 \text{ ժամ}$$

$$W = 216 \text{ մ}^2 / 5.6 = 38.6 \text{ մ}^2$$

Այնուհետև որոշում ենք նորմայի մեծությունը.

$$\mathcal{N}_{\text{հերթ.}} = \frac{420 - (12 + 10)}{60 + 3 + 9} \times 38.6 = 212.3 \text{ մ}^2$$

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ տվյալ աշխատողը նորման գերակատարել էր

$$216 \text{ մ}^2 / 212.3 \text{ մ}^2 \times 100 = 1.74\% - \text{ով:}$$

Առաջադրանք 2.

Տրակտորով և կցասայլակով դաշտից պետք է տեղափոխվի սիլոսի կանաչ զանգված: Սայլակի նախագծային բեռնատարողությունը 4 տոննա է: Տեղափոխման հեռավորությունը՝ 5 կմ: Բարձրման և բեռնաթափման աշխատանքները մեքենայացված են և 1 տ բեռի հաշվով դրանց գումարը կազմում է 2.1 ռ: Բեռով շարժման արագությունը՝ 18 կմ/ժամ, առանց բեռի՝ 21 կմ/ժամ: $T_{\text{ն.ե.}} = 48$ ռ, $T_{\text{հանգ.}} = 28$ ռ, $T_{\text{ա.կ.}} = 10$ ռ: Սիլոսի կանաչ զանգվածը հանդիսանում է 2-րդ դասի բեռ, բեռնատարողության օգտագործման գործակիցը կազմում է 0.8:

Որոշել 8-ժամյա հերթափոխի արտադրական նորման:

Տրանսպորտային աշխատանքներում հերթափոխի արտադրական նորման սահմանվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{U}_{\text{հերթ.}} = \frac{T_{\text{հերթ.}} - (T_{\text{ն.ե.}} + T_{\text{հանգ.}} + T_{\text{ա.կ.}})}{T_{\text{երթ.}}} \times Q \text{ տոննաներով}$$

$$\mathcal{U}_{\text{հերթ.}} = \frac{T_{\text{հերթ.}} - (T_{\text{ն.ե.}} + T_{\text{հանգ.}} + T_{\text{ա.կ.}})}{T_{\text{երթ.}}} \times Q \times L \quad \begin{array}{l} \text{տոննա} \\ \text{կիլոմետրերով} \end{array}$$

որտեղ $T_{\text{երթ.}}$ –ը մեկ երթի տևողությունն է, ըրպե,

Q – մեքենայի փաստացի բեռնատարողությունն է, տոննա,

L – տեղափոխման միջին հեռավորությունն է, կմ:

Մեքենայի փաստացի բեռնատարողությունը $/Q/$ որոշելու համար նորմատիվային բեռնատարողությունը բազմապատկում ենք բեռնատարողության օգտագործման գործակցով:

Մեկ երթի տևողությունը որոշվում է, հիմք ընդունելով բեռնման և բեռնաթափման տևողությունները և բեռով ու առանց բեռի մեքենայի ճանապարհին գտնվելու ժամանակը: Այն կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$T_{\text{երթ.}} = t_1 + t_2 + \frac{2L}{V_{\text{միջ.}}}, \text{ որտեղ}$$

t_1 և t_2 – համապատասխանաբար մեքենայի բեռնման և բեռնաթափման ժամանակներն են,

L – տեղափոխման միջին հեռավորությունն է, կմ,

$V_{\text{միջ.}}$ – մեքենայի շարժման միջին արագությունն է, կմ/ժ:

Մեքենայի փաստացի բեռնատարողությունը կկազմի.

$$Q = 4 \times 0.8 = 3.2 \text{ տ}$$

Մեքենայի շարժման միջին արագությունը կկազմի.

$$V_{\text{միջ.}} = \frac{2V_1 V_2}{V_1 + V_2} = \frac{2 \times 18 \times 21}{18 + 21} = 19.4 \text{ կմ/ժ}$$

Մեկ երթի տևողությունը կկազմի.

$$T_{\text{երթ}} = 2,1_{\text{ր}} \times 3,2_{\text{տ}} + \frac{2 \times 5 \text{ կմ}}{19,4 \text{ կմ/ժ}} \times 60 = 37,6_{\text{ր}}$$

Հերթափոխի արտադրական նորման տոննաներով կկազմի.

$$V_{\text{հերթ}} = \frac{480 - (48 + 28 + 10)}{37.6} \times 3.2 = 33.5 \text{ տոննա}$$

Տոննա-կիլոմետրերով կկազմի.

$$V_{\text{հերթ}} = \frac{480 - (48 + 28 + 10)}{37.6} \times 3.2 \times 5 = 167,5 \begin{matrix} \text{տոննա} \\ \text{կիլոմետրերով} \end{matrix}$$

Առաջադրանք 3.

Որոշել արտադրական նորման և վառելիքի ծախսի նորման հետևյալ պայմաններում.

Տնտեսությունում կատարվելու է 23-25 սմ խորությամբ վար: Գոնի միջին երկարությունը 500 մ, թեքության աստիճանը՝ 5-7°, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 900 մ, քարքարոտվածությունը՝ 12 մ³/հա: Տիպային արտադրական նորման կազմում է 6.5 հա, վառելիքի ծախսի տիպային նորման՝ 17 կգ:

Առաջադրանքի լուծման համար հիմք են ծառայում դաշտերի անձնագրավորման նյութերը և տիպային նորմաների տեղայնացման գործակիցները:

Ըստ քարքարոտվածության աստիճանի դաշտերը բաժանվում են հինգ կարգի: Առաջին կարգում դասվում են այն դաշտերը, որտեղ 1 հա վարելահողում քարերի քանակը կազմում է մինչև 1 մ³, երկրորդ կարգի համար՝ 1-10 մ³, երրորդ կարգի համար՝ 10-25 մ³, չորրորդ կարգի հողերի համար՝ 25-50 մ³ և հինգերորդի համար՝ 50 մ³-ից ավելի:

Ուղղման գործակիցներն ըստ հողակտորի քարքարոտվածության աստիճանի

Ցուցանիշներ	Քարքարոտվածության կարգը				
	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ
Աշխ. արտադրողականության	1,00	0,98	0,92	0,85	0,79
Վառելիքի ծախսի	1,00	1,01	1,02	1,04	1,06

Ուղղման գործակիցներն ըստ հողակտորում գոնի երկարության

Գոնի երկարությունը, մ	Արտադրական նորմայի	Վառելիքի ծախսի
Մինչև 200 մ	1,00	1,00
200-600 մ	1,06	0,93
600-ից բարձր	1,16	0,91

Ուղղման գործակիցներն ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության

Բարձրությունը ծովի մակերևույթից	Արտադրական նորմայի			Վառելիքի ծախսի		
	մինչև 200 մ	200-600 մ	600 մ-ից բարձր	մինչև 200 մ	200-600 մ	600 մ-ից բարձր
մինչև 500 մ	1,00	1,00	-	1,00	1,00	-
500-1000 մ	-	0,94	0,93	-	1,04	1,06
1000-1500 մ	-	-	0,87	-	-	1,09
1500-2000 մ	-	-	0,82	-	-	1,15

Ուղղման գործակիցներն ըստ հողակտորի թեքության աստիճանի

Ցուցանիշներ	Թեքության աստիճանը				
	մինչև 1	1-3	3-5	5-7	7-ից բարձր
Աշխ. արտադրողականության	1,00	0,98	0,96	0,92	0,86
Վառելիքի ծախսի	1,00	1,05	1,12	1,20	1,30

Նորմաների տեղայնացման նպատակով նախ որոշում են ուղղման գործակիցներն ըստ յուրաքանչյուր գործոնի և ընդհանրական ուղղման գործակիցները արտադրանքի նորմայի ու վառելիքի ծախսի նորմայի համար՝ որպես բոլոր գործոնների գծով դուրս բերված գործակիցների արտադրյալ:

Արտադրական նորմայի ընդհանրական ուղղման գործակիցը կկազմի.
 $1.06 \times 0.92 \times 0.93 \times 0.92 = 0.83$

Վառելիքի ծախսի նորմայի ընդհանրական ուղղման գործակիցը կկազմի.

$$0.93 \times 1.2 \times 1.06 \times 1.02 = 1.2$$

Այնուհետև համապատասխան ընդհանրական ուղղման գործակիցները բազմապատկելով տիպային նորմաներով, ստանում ենք արտադրանքի և վառելանյութի ծախսի նորմաները տվյալ պայմանների համար:

Արտադրական նորման տվյալ պայմանների համար կկազմի՝

$$6.5 \text{ հա} \times 0.83 = 5.4 \text{ հա:}$$

Վառելիքի ծախսի նորման տվյալ պայմանների համար կկազմի՝

$$17 \text{ կգ} \times 1.2 = 20.4 \text{ կգ:}$$

Առաջադրանք 4.

Կաթնային տավարաբուծական ֆերմայում կապովի պահվածքի պայմաններում կովերի միջին տարեկան մթերատվությունը կազմում է 3000կգ: Մեքենայական կթի օպերատորի պարտականությունների մեջ մտնում են կիրթը, կերակրումը, կապումն ու արձակումը, կենդանիների մաքրումը, կե-

րամանների մաքրումը, մասնակցությունը զրոանասնաբուժական միջոցառումներին:

Օրական կթի քանակն ընդունել 2: Կովերին կերակրում են օրական 3 անգամ, կերը բաժանում են ձեռքով: Աշխատողին կցված է 50 կով, որոնցից 45-ը՝ կթվող:

Սահմանել մեքենայական կթի օպերատորի աշխատանքի սպասարկման նորման 2 հերթ աշխատանքի դեպքում դիտարկման արդյունքների հիման վրա:

Լուծում

Նախ կատարում են օպերատորի աշխատանքի խրոնոդիտարկումներ և արդյունքները գրանցում դիտարկման թերթիկում: Տվյալների վերլուծության արդյունքում ստանում են օպերատորի պարտականությունների մեջ մտնող աշխատանքների կատարման ժամանակի ծախսումները:

Այնուհետև որոշում են ծախսումները մեկ կովի մեկ կթի հաշվով: Ըստ դիտարկման արդյունքների՝ 90 կթի /45 կով x 2/ ժամանակը կազմել է 237 րոպե: 1 կովի մեկ կթի տևողությունը կկազմի $237 \text{ ր} : 90 = 2.63 \text{ ր}$:

Այնուհետև հաշվարկվում է օրական կթի միջին ժամանակի ծախսը՝
 $T_{կիթ} = 2.63 \times 2 \times 0.83 = 4.366 \text{ ր}$:

Օրվա ընթացքում օպերատորի աշխատանքի ծախսումները

Աշխատանքի տեսակը	Ժամանակի ծախսումները, ր	
	50 կովի հաշվով	1 կովի հաշվով
Նախապատրաստական-եզրափակիչ ժամանակ	36	-
Կերերի բաժանման ժամանակ	99	1.98
Կապելու-արձակելու ժամանակ	28	0.56
Մաքրում՝		
ա/ կովերի	21	0.42
բ/ կերամանների	12	0.24
Միանգամյա աշխատանքներ	8	0.16

$$T_{սպ} = 4.37 + 1.98 + 0.56 + 0.42 + 0.24 + 0.16 = 7.73 \text{ ր}:$$

Այնուհետև կարող ենք որոշել նաև սպասարկման նորման, հիմք ընդունելով, որ հերթափոխի ընթացքում հանգստի նորմատիվը կազմում է 20 րոպե, անձնական կարիքների ժամանակի նորմատիվը՝ 10 րոպե:

$$N_{սպ} = \frac{480 - (36 + 20 + 10)}{7.73} = 53 \text{ կով}$$

Թեման կարելի է ամփոփել ուսանողների հարցումով՝ նախօրոք մշակման համար հանձնարարելով հետևյալ հարցերը.

1. Աշխատանքի նորմավորմանը ներկայացվող պահանջները:
2. Նորմաների հիմնավորմանը ներկայացվող պահանջները:
3. Աշխատանքի նորմաների տեսակները:
4. Աշխատանքի նորմավորման մեթոդները և դրանց էությունը:
5. Հիմնական նորմագոյացնող գործոնները դաշտային մեքենայացված աշխատանքներում:
6. Հիմնական նորմագոյացնող գործոնները ձեռքի աշխատանքներում:
7. Հիմնական նորմագոյացնող գործոնները տրանսպորտային աշխատանքներում:
8. Հիմնական նորմագոյացնող գործոնները անասնաբուժությունում:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Թեմայի հիմնավորման ժամանակ կարելի է արտադրության միջոցների դասակարգումը տալ սխեմայի տեսքով.

ԸՍՏ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ	
ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐ	ՇՐՋԱՆԱՌՈՒ ՖՈՆԴԵՐ
գյուղատնտեսական նշանակության հիմնական արտադրական ֆոնդեր	արտադրական պաշարներ
հիմնական արտադրական ոչ գյուղատնտեսական նշանակության ֆոնդեր	անավարտ արտադրության վրա կատարված ծախսեր
հիմնական ոչ արտադրական ֆոնդեր	մատղաշ և բտման տակ դրված հասակավոր անասուններ

Գյուղացիական տնտեսությունների մեծ մասը չունի տեխնիկա, գյուղատնտեսությունում լայն տարածում է գտել տեխնիկական միջոցների վարձակալումը: Այդ գործընթացը մեր հանրապետությունում տարբերվում է մյուս երկրներում գործող տարբերակներից, քանի որ վարձակալման ժամանակ տեխնիկան ոչ թե հանձնվում է գյուղացուն, այլ վարձատուն է իր տեխնիկայով աշխատում:

Գյուղացիական տնտեսությունների համար որպես գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման լավագույն տարբերակ կարող է հանդես գալ լիզինգը: Գործնականում առավել լայն տարածում են ստացել լիզինգի երկու ձև՝ ռենտինգ /մեքենաների և սարքավորումների վարձակալումը կարճ ժամանակահատվածի համար/ և հայրինգ /վարձակալումը միջին տևողության ժամանակի համար/: Լիզինգին մասնակցում են երեք կողմ՝ գույքը վաճառողը, գույքը վարձակալման սվողը և գույքը օգտագործողը: Մեքենաների և սարքավորումների լիզինգի պայմանագրային ժամկետը տատանվում է 3-5 տարի: Առաջավոր երկրներում լիզինգային վարձակալումը սահմանափակվում է ամորտիզացիայի ժամկետով:

Կարևորելով տեխնիկական միջոցների մասնակցությունը գյուղատնտեսական արտադրությանը՝ կարելի է ներկայացնել մեքենաների համակարգին ներկայացվող պահանջները:

Թեմայում առաջադրված խնդիրների լուծման համար պետք է օգտվել տրված բանաձևերից, ինչպես նաև «Գյուղատնտեսական արտադրության արդյունքային և արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները» թեմայից:

ՄԵՔԵՆԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ				
ԲՆԱԿԱՆ	ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ	ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ	ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ	ՏՆՏԵՍԱԿԱՆ
<ul style="list-style-type: none"> - հողի մեխանիկական կազմը - հողի խոնավությունը - մշակվող դաշտերի չափերը՝ գոնի երկարությունը - ռելիեֆը՝ թեքության աստիճանը 	<ul style="list-style-type: none"> - վարի խորությունը - հողաշերտի շրջվելը - հողի տեղաշարժվելը և միախառնվելը - սերմի ցանքի խորությունը - միջշարային տարածությունը, ցանքի նորմայի պահպանումը 	<ul style="list-style-type: none"> - աշխատանքի անընդհատությունը - սպասարկող անձնակազմի քանակի կրճատումը - աշխատանքի անվտանգությունը - օժանդակ նյութերի ծախսի կրճատումը 	<ul style="list-style-type: none"> - մեքենայի ամրությունը - հզորության լիարժեք օգտագործումը - մաշված մասերի փոխումը 	<ul style="list-style-type: none"> - աշխատանքի արտադրողականության բարձրացումը - աշխատանքի ինքնարժեքի իջեցումը

Թեման կարելի է ամփոփել ուսանողների հարցումով՝ նախօրոք մշակման համար հանձնարարելով հետևյալ հարցերը.

1. Ինչպե՞ս են դասակարգվում արտադրության միջոցները:
2. Որո՞նք են գյուղատնտեսական ձեռնարկություններում արտադրության միջոցների ձևավորման ու վերարտադրության աղբյուրները:
3. Ի՞նչ ցուցանիշներով են որոշում հիմնական միջոցներով տնտեսության հագեցվածությունը:
4. Ի՞նչ ցուցանիշներով են որոշում հիմնական և շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետությունը:
5. Ինչպե՞ս են հաշվում պահանջվող տրակտորների և բեռնատարների քանակը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Առաջադրանք 2 Հաշվել գյուղացիական կոլեկտիվ տնտեսության աշխատանքային ռեսուրսների աշխատանքի սեզոնայնությունը: Տնտեսությունը զբաղվում է և՛ անասնաբուծությամբ, և՛ բուսաբուծությամբ: Գարնանային և բերքահավաքի լարված շրջանում տնտեսությունը վարձում է աշխատողներ:

աղյուսակ 1 /առաջադրանք 2/

Աշխատանքային ծախսումներն ըստ ամիսների

Տարվա ամիսները	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
Աշխատող, մարդ	12	12	14	18	18	21	21	21	22	22	19	14
1 աշխատողի աշխատանքային միջին օրերը, օր	22	22	24	24	25	28	28	28	28	26	24	22

Սեզոնայնության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$F_{\text{սեզ.}} = \frac{Q_{\text{սվ կամ առ}}}{Q_{\text{միջ}}}$$

$F_{\text{սեզ}}$ - սեզոնայնության գործակիցը,

$Q_{\text{սվ կամ առ}}$ - նվազագույն /կամ առավելագույն/ զբաղվածությունն է ամսում՝ մարդ-օր, մարդ-ժամ,

Զմիջ - ամսական միջին զբաղվածությունն է՝ մարդ-օր, մարդ-ժամ:
Նախ պետք է հաշվել ամսական միջին զբաղվածությունը՝ մարդ-օրով.

$$\frac{22*12 + 22*12 + 24*14 + 24*18 + 25*18 + 28*21 + 28*21 + 28*22 + 26*22 + 24*19 + 22*14}{12} = 455 \text{ մարդ-օր}$$

Ամսական միջին զբաղվածությունը 455 մարդ-օր: Առավելագույն ծախսումները եղել են սեպտեմբեր ամսին՝ 616 մարդ-օր:

$$q_{\text{սեզ.}} = \frac{616}{455} = 1.35$$

Սեզոնայնության գործակիցը որքան շեղված է մեկից, այնքան տնտեսությունում մեծ է աշխատանքային ռեսուրսների սեզոնայնությունը: Ուսումնասիրվող տնտեսությունում սեզոնայնությունը մեղմ է, քանի որ տնտեսությունում բուսաբուծությունը զուգակցվում է անասնաբուծության հետ: Այն տնտեսությունները, որոնք զբաղվում են միայն բուսաբուծությամբ, ճմռան ամիսներին աշխատանքային ծախսումներ չունեն և սեզոնայնության գործակիցի շեղումը մեծ է:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Աշխատանքի բարձր արտադրողականությունը տնտեսության արդյունավետ գործունեության հիմքն է: Արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները չեն կարող բարձր լինել ցածր արտադրողականության պայմաններում: Թեմայի շրջանակներում ցույց է տրվում երկու տնտեսական ցուցանիշների կապը՝ աշխատանքի արտադրողականության և աշխատատարության հակադարձ կապը:

$$\Gamma_T = \frac{B\Pi_H}{t} \quad T = \frac{t}{B\Pi_H}$$

Աշխատանքի արտադրողականության և աշխատատարության ցուցանիշների արտադրյալը պետք է հավասար լինի մեկի: Բացի այս երկու ցուցանիշների հակադարձ կապից, կապ գոյություն ունի նաև աշխատանքի արտադրողականության /հաշվարկված համախառն արտադրանքի ելքը արժեքային արտահայտությամբ մեկ աշխատողի հաշվով/, հիմնական արտադրության միջոցների հագեցվածությունը արտահայտող ֆոնդազինվածության և օգտագործման արդյունավետությունը բնութագրող ֆոնդահատույցի ցուցանիշների միջև: Ֆոնդազինվածության և ֆոնդահատույցի արտադրյալը աշխատանքի արտադրողականությունն է:

$$F_q = \frac{\Phi_{\text{հիմն. գտ. արտ.}}}{U_{\text{շխ. հիմն.}}} \quad F_h = \frac{ZU}{\Phi_{\text{հիմն. գտ. արտ.}}}$$

Ֆոնդազինվածության և ֆոնդահատույցի բազմապատկման արդյուն-

քում ստացվում է ՀԱ/Աշխիմս՝ աշխատանքի արտադրողականությունը մեկ աշխատողի հաշվով:

Առաջադրանք 1 Հաշվել 2012 թ. տնտեսության աշխատանքի արտադրողականությունը՝ մեկ մարդ-օրվա և մեկ աշխատողի հաշվով, աշխատատարությունը, եթե հիմնական աշխատողները 9 մարդ են և տարվա ընթացքում մեկ աշխատողը աշխատել է 288 օր:

աղյուսակ 1/առաջադրանք 1/

Համախառն արտադրանքի հաշվարկման տվյալներ

#	Ցուցանիշները	Արտադրվել է, g	1 g իրացման միջին գինը, հազար դրամ
1.	կաթ	125	12.0
2.	քաշած տավարի	15	220.0
3.	քաշած խոզի	35	280.0
4.	խաղող	320	14.0

Առաջադրանքը հաշվելու համար նախ պետք է հաշվենք տնտեսությունում ստացված համախառն արտադրանքը՝ յուրաքանչյուր արտադրատեսակի քանակը բազմապատկելով իրացման միջին գնով: Տավարի և խոզի քաշաճի իրացման գինը վերցվել է՝ հիմք ընդունելով մսի իրացման գինը և մսեղիքի ելքը /տավարի համար 45-50%, խոզի համար 55-60%/:

$$125 * 12.0 + 15 * 110.0 + 35 * 140.0 + 320 * 14.0 = 12530.0 \text{ հազար դրամ:}$$

Աշխատանքի արտադրողականությունը տնտեսության մեկ հիմնական աշխատողի հաշվով կլինի՝

$12530.0 / 9 = 1392.22$ հազար դրամ, տնտեսության յուրաքանչյուր աշխատող տարվա ընթացքում արտադրել է 1392.22 հազար դրամի համախառն արտադրանք:

Աշխատանքային ծախսումները տնտեսությունում կազմել են $9 * 288 = 2592$ մարդ-օր: Հետևաբար աշխատանքային ծախսումների միավորի հաշվով աշխատանքի արտադրողականությունը կլինի՝

$12530.0 / 2592 = 4834$ դրամ, այսինքն՝ մեկ աշխատողը մեկ օր աշխատելու ընթացքում արտադրել է 4834 դրամի համախառն արտադրանք:

Աշխատատարությունը ցույց է տալիս միավոր համախառն արտադրանք արտադրելու վրա աշխատանքային ծախսումները: Քանի որ միավոր համախառն արտադրանքը /մեկ դրամը/ շատ փոքր է, այս ցուցանիշը կարող ենք հաշվել կամ 1000 դրամ համախառն արտադրանք արտադրելու հաշվով, կամ էլ աշխատանքային ծախսումները արտահայտենք մարդ-ժամերով:

$2592 / 12530000 = 0.0002$ կամ 1000 դրամ համախառն արտադրանք արտադրելու համար ծախսվել է՝ 0.2 մարդ-օր:

Մարդ-օրերը մարդ-ժամերի վերահաշվարկելու համար պետք է մարդ-օրերը բազմապատկենք մեկ աշխատանքային օրվա աշխատաժամերի

տևողությամբ: Եթե մեկ աշխատանքային օրում աշխատում են մեկ հերթափոխով՝ 8 ժամ, ապա՝

$$2592 * 8 = 20736 \text{ մարդ-ժամ}$$

$20736 / 12530000 = 0.0016$ կամ 1000 դրամ համախառն արտադրանք արտադրելու համար ծախսվել է 1.6 մարդ-ժամ:

Թեման կարելի է ամփոփել ուսանողների հարցումով՝ նախօրոք մշակման համար հանձնարարելով հետևյալ հարցերը.

1. Ո՞րն է աշխատանքի արտադրողականության և աշխատատարության էությունը:
2. Ի՞նչ ցուցանիշներով են հաշվարկում աշխատանքի արտադրողականությունը և աշխատատարությունը:
3. Ի՞նչ գործոններ են ազդում աշխատանքի արտադրողականության վրա, և որո՞նք են արտադրողականության բարձրացման հնարավոր ուղիները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Թեմայի նպատակն է ուսանողին սովորեցնել տարիֆային համակարգի դերն ու նշանակությունը: Ուսանողը պետք է կարողանա որոշել աշխատանքի կարգը, տարիֆային ցանցի միջոցով սահմանել տարիֆային դրույքը և հաշվարկել կոնկրետ աշխատողի աշխատանքի վարձատրության չափը՝ աշխատանքի վարձատրության տարբեր ձևերի և համակարգերի կիրառման դեպքում:

Աշխատանքը մարդու գոյության անհրաժեշտ նախապայմանն է: Այն հանդիսանում է ցանկացած տեսակի գործունեության հիմքը: Աշխատանքի նկատմամբ մարդու վերաբերմունքը պայմանավորված է նյութական խթանման կազմակերպմամբ, իսկ դրա հիմնական եղանակը աշխատանքի վարձատրությունն է:

Աշխատանքի վարձատրության հարցերը քննարկելիս շեշտը պետք է դնել այն հանգամանքի վրա, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրության հարցերի լուծումը հիմնականում գտնվում են տնտեսվարող սուբյեկտների իրավասության ներքո: Այդուհանդերձ, գոյություն ունեն աշխատանքի վարձատրության կազմակերպման հիմունքներ, որոնց պետք է ծանոթ լինի յուրաքանչյուր ուսանող:

Աշխատանքի վարձատրություն թեմայի ուսումնասիրումը պետք է սկսել աշխատանքի վարձատրության գործառույթների ներկայացմամբ: Յուրաքանչյուր գործառույթի վերաբերյալ անհրաժեշտ է բերել օրինակներ, որպեսզի ուսանողի մոտ նյութը տպավորվի: Օրինակ, խոսելով աշխատանքի վարձատրության ներուժային-տեղաբաշխիչ գործառույթի մասին, պետք է նշել, որ այդ գործառույթն իրականացվում է աշխատավարձի նկատմամբ գոտիական գործակիցների միջոցով և նպատակ ունի ոչ միայն ապահովել բնակչության համաչափ զարգացումն ըստ տարածաշրջանների, այլ

Նաև կարգավորել բնակչության տեղաշարժը ինչպես աշխարհագրական տեսանկյունից, այնպես էլ ըստ ճյուղերի և ձեռնարկությունների:

Յուրաքանչյուր գործունեություն պետք է իրականացվի որոշակի սկզբունքների հիման վրա: Սկզբունքը դա ղեկավարող օրենք է: Հետևապես անհրաժեշտություն է զգացվում ուսանողներին ծանոթացնել աշխատանքի վարձատրության կազմակերպման սկզբունքներին:

Աշխատանքի վարձատրության կազմակերպման առանցքը տարիֆային համակարգն է, այդ պատճառով էլ առանձնակի ուշադրություն պետք է դարձնել դրա ներկայացմանը: Միայն այս հարցերը լավ պատկերացնելով ուսանողներն ի վիճակի կլինեն յուրացնել աշխատանքի վարձատրության հետ կապված մնացած հարցերը և կկարողանան կատարել գործնական հաշվարկներ:

Առաջարկում ենք նախքան աշխատանքի վարձատրության մյուս հարցերի ուսումնասիրմանն անցնելը, ստուգել ուսանողների կողմից տարիֆային համակարգի յուրացման աստիճանը: Դրա համար կարող է առաջարկվել գրավոր հարցում, օրինակ՝ հետևյալ բովանդակությամբ.

1. Տարիֆային համակարգի սահմանումը:
2. Տարիֆային համակարգի տարրերը, դրանց բնութագիրը և նշանակությունը:
3. Տարիֆատրակավորման տեղեկատու. որոշել որևէ (ուսանողի ընտրությամբ) աշխատանքի տարիֆային կարգը, օգտագործելով գնահատման տրված չափանիշները.
 - աշխատանքի ծանրություն (1-5),
 - աշխատանքի բարդություն (1-5),
 - աշխատանքի պատասխանատվություն (1-4),
 - աշխատանքի վնասակարություն (1-4):
4. Տարիֆային ցանց. կազմել համաչափ աճող, հետադիմորեն աճող, առաջադիմորեն աճող և խառը աճող տարիֆային ցանցեր:


Տարիֆ.կարգ	I	II	III	IV	V	VI
ՏԳ հավասարաչափ աճող						
ՏԳ առաջադիմորեն աճող						
ՏԳ հետադիմորեն աճող						
ՏԳ խառը աճող						

5. Տարիֆային դրույք. որոշել մի քանի աշխատանքների տարիֆային դրույքները:

6. Գոտիական գործակիցների նշանակությունը:

Այս հարցերի յուրացումից հետո կարելի է անցնել աշխատանքի վարձատրության ձևերի և համակարգերի ուսումնասիրմանը:

Նախ անհրաժեշտ է ցույց տալ աշխատանքի վարձատրության կազմակերպման հիմքերը: Դա կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի միջոցով.



Տվյալ թեման ունի գործնական նշանակություն, ուստի հարցերի մի մասի պատասխանը դասախոսը կարող է ակնկալել հենց ուսանողներից, օրինակ, աշխատանքի վարձատրության ձևերը /գործավարձ և ժամավարձ/, դրանց սահմանումները և այլն: Այնուհետև դասախոսը պետք է ներկայացնի աշխատանքի վարձատրության համակարգերը, իսկ ուսանողների գիտելիքները կստուգվեն առաջադրանքների ինքնուրույն լուծմամբ:

Առանձնակի ուշադրության է արժանի բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում աշխատանքի վարձատրության կազմակերպման հարցերի ուսումնասիրումը: Նախ պետք է ուսանողին բացատրել, թե ո՞ր ճյուղում վարձատրության ո՞ր համակարգն է նպատակահարմար կիրառել: Այնուհետև ցանկալի կլինի բերել օրինակներ կոնկրետ հաշվարկների տեսքով, որպեսզի ուսանողի մոտ ավելի լավ տպավորվի նյութը: Ներկայացնենք գործնական հաշվարկների օրինակներ:

ա/ Աշխատավարձի ֆոնդի հաշվարկ

z	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Աշխ. ծավալ	Հերթ. արտ. նորմա	Մարդ-օրերի ծախս	Տարիֆային կարգեր	Տարիֆային դրույթներ /դրամ/	Ընդ. աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5	6	7	8	9
1	Գոմաղբի բարձում	տ	250	3	83.3	IV	3200	266.6
2	Գոմաղբի տեղափոխում	տ/կմ	1000	40	250	IV	3200	800.0
3	Գոմաղբի ցրում	հա	5	0.3	16.7	II	2400	40.0
4	Խորը վար	հա	5	3.5	1.4	V	3600	5.1
5	Հարթեցում	հա	5	5.0	1.0	IV	3200	3.2
6	Առու հանել	հա	5	5.0	1.0	IV	3200	3.2
7	Սաճիլի տեղափոխում	տ/կմ	2	0.5	4	IV	3200	12.8
8	Սաճիլում	հա	5	0.02	250	II	2400	600
9	Ոռոգում	հա	5	0.5	10	III	2800	28
10	Պարարտանյութի բարձում	տ	2.1	4.0	0.5	III	2800	1.5
11	Պարարտանյութի տեղափոխում	տ/կմ	8.4	40	0.2	IV	3200	0.67
12	Մտուցում 5 անգամ	հա	25	0.03	833.3	III	2800	2333.3
13	Փոցխում 2 անգամ	հա	10	5.0	2	IV	3200	6.4
14	Ոռոգում 12 անգամ	հա	60	5.0	12	III	2800	33.6
15	Բուժանյութի պատրաստում	դլ	1200	50	24	III	2800	67.2
16	Բուժում 3 անգամ	հա	15	5	3	V	3600	10.8
17	Բերքահավաք	g	1500	4	375	II	2400	900
18	Բերքի տեսակավորում	g	1500	10	150	II	2400	360
19	Բերքի բարձում	տ	150	4	37.5	II	2400	90
20	Բերքի տեղափոխում	տ/կմ	750	40	18.75	IV	3200	60
	Ընդամենը	x	x	x	2156.65	x	x	5611.57

բ/ Աշխատանքի վարձատրությունը՝ կախված արտադրանքի քանակից

Որոշել մեկ ցենտներ կարտոֆիլի ակորդային վարձաչափը, եթե տնտեսությունում տվյալ տարում պետք է արտադրվի 800 g կարտոֆիլ /4 հա, 200 g/հա պլանային բերքատվությամբ/: Տեխնոլոգիական քարտի հիման վրա հաշվարկված աշխատանքի վարձատրության տարիֆային ֆոնդը կազմում է 2 մլն դրամ:

Նախ պետք է հաշվարկել աշխատանքի վարձատրության ակորդային ֆոնդը, որի համար տարիֆային ֆոնդն ավելացնում ենք 25-50%-ով: Մեր օրինակում ավելացնենք 40%-ով:

2 մլն. դրամ \times 1.4 = 2.8 մլն. դրամ:

Այնուհետև որոշում ենք 1g կարտոֆիլի պլանային վարձաչափը, որի համար հաշվարկված ակորդային ֆոնդը հարաբերում ենք արտադրանքի պլանային քանակին:

2.8 մլն. դրամ / 800 g = 3500 դրամ/g:

Տնտեսական տարվա ավարտից հետո այս պլանային ցուցանիշները ճշգրտվում են: Ընդունենք, փաստացի տնտեսությունում արտադրվել է 900 g կարտոֆիլ: Հետևաբար աշխատանքի վարձատրության ճշգրտված ֆոնդը կկազմի.

900 g \times 3500 դրամ = 3150000 դրամ:

Վարձատրության այս ֆոնդը ներառում է կանխավճարները և հավելավճարի գումարը: Հավելավճարի գումարը որոշելու համար վարձատրության ֆոնդից պետք է հանենք տարվա ընթացքում վճարված կանխավճարների գումարը, որը սովորաբար աշխատանքի վարձատրության տարիֆային ֆոնդին մոտ գումար է կազմում: Այսպիսով, հավելավճարի գումարը կկազմի.

3150000 դրամ – 2000000 դրամ = 1150000 դրամ:

Աշխատողների միջև այս գումարը բաշխվում է նրանց կողմից տարվա ընթացքում ստացված կանխավճարներին համամասնորեն: Դրա համար նախ հաշվարկում ենք 1 դրամ կանխավճարին բաժին ընկնող հավելավճարի գումարը՝ 1150000 դրամ / 2000000 դրամ = 0.575 դրամ:

Ընդունենք, աշխատողներից մեկը տարվա ընթացքում ստացել է 500000 դրամ կանխավճար: Նրան հասանելիք հավելավճարը կկազմի. 500000 դրամ \times 0.575 = 287500 դրամ, իսկ ընդհանուր վարձատրության գումարը՝ 500000 դրամ + 287500 դրամ = 787500 դրամ:

գ/ Աշխատանքի վարձատրությունը՝ համախառն արտադրանքի արժեքի հաշվով

Եթե աշխատանքի վարձատրության մակարդակը կախման մեջ ենք դնում արտադրված բերքից, դրանով աշխատողներին շահագրգռում ենք միայն արտադրանքի քանակի ավելացման համար, որը թերի է: Աշխատանքի վարձատրությունը պետք է այնպես կազմակերպել, որ աշխատողը ձգտի բարձրացնել արտադրանքի որակը: Այդ նպատակով առաջարկվում

Է աշխատավարձը կախման մեջ դնել համախառն արտադրանքի արժեքից, որում արտացոլվում է ոչ միայն արտադրանքի քանակը, այլ նաև որակն ու ստացման ժամկետները: Բարձրորակ և ճիշտ ժամկետներում արտադրված բուսաբուծական արտադրանքն ավելի բարձր գին ունի: Հաշվարկը կատարենք նախորդ առաջադրանքի տվյալներով: Այստեղ ևս որոշում ենք ակորդային ֆոնդը՝

$$2 \text{ մլն. դրամ} \times 1.4 = 2.8 \text{ մլն. դրամ:}$$

Ընդունենք, որ 1 g կարտոֆիլի գինը նախատեսել ենք 8000 դրամ: Համախառն արտադրանքի պլանային արժեքը կկազմի.

$$800 \text{ g} \times 8000 \text{ դրամ} = 6,4 \text{ մլն. դրամ:}$$

1000 դրամ համախառն արտադրանքի հաշվով պլանային վարձաչափը որոշում ենք վարձատրության ակորդային ֆոնդը հարաբերելով համախառն արտադրանքի արժեքին և բազմապատկելով 1000-ով:

$$\frac{2,8 \text{ մլն դրամ}}{6,4 \text{ մլն դրամ}} \times 1000 = 437 \text{ դրամ:}$$

Սա նշանակում է, որ տարվա սկզբին նախատեսվում էր աշխատողներին 1000 դրամ համախառն արտադրանքի արժեքի հաշվով վճարել 437 դրամ աշխատավարձ:

Տնտեսական տարվա վերջում պարզվել է, որ փաստացի արտադրվել է 900 g կարտոֆիլ, իսկ վաղ ժամկետներում արտադրելու հաշվին 1 g գինը կազմել է 8500 դրամ: Այսպիսով, համախառն արտադրանքի ճշգրտված արժեքը կկազմի.

$$900 \text{ g} \times 8500 \text{ դրամ} = 7.65 \text{ մլն. դրամ:}$$

Փաստացի վարձատրության գումարը կկազմի՝

$$\frac{7,6 \text{ մլն դրամ}}{437 \text{ դրամ}} \times 1000 = 3343050 \text{ դրամ:}$$

Հավելավճարի գումարը կկազմի՝

$$3343050 \text{ դրամ} - 2000000 \text{ դրամ} = 1343050 \text{ դրամ}$$

1դրամ կանխավճարին բաժին ընկնող հավելավճարի գումարը կկազմի.

$$1343050 \text{ դրամ} / 2000000 \text{ դրամ} = 0.67 \text{ դրամ:}$$

Աշխատողին հասանելիք հավելավճարը՝ $500000 \text{ դրամ} \times 0.67 = 335000 \text{ դրամ}$, իսկ ընդամենը վարձատրությունը՝ 835000 դրամ:

Սակայն այս եղանակը ևս թերություն ունի՝ այստեղ հաշվի չենք առնում, թե տվյալ քանակի և որակի արտադրանքի արտադրության համար որքան ծախս է կատարվել: Ցանկալի է, որ աշխատանքի վարձատրության կազմակերպման համակարգը աշխատողներին շահագրգռի նաև նյութադրամական ծախսումների խնայողության մեջ: Այդ կապը ստեղծելու համար խորհուրդ է տրվում աշխատանքի վարձատրությունը կախման մեջ դնել համախառն եկամտից: Հաշվարկը կատարվում է նույն տրամաբանությամբ:

դ/ Տավարաբուծությունում միավոր արտադրանքի (կաթ, միս) վարձաչափի հաշվարկման կարգը

Ընդունենք տնտեսությունում կթվորը ձեռքի կթի դեպքում սպասարկում է 16 կով, նախատեսված է ստանալ 467 g կաթ (1 կովից՝ 2937 կգ) և 16 կովից ստանալ 13 հորթ (ծնելիությունը 80 %):

Կաթի համար հաշվարկվելիք վարձաչափը պետք է տարբերակել ըստ արոտային և մսուրային ժամանակաշրջանների:

Վարձաչափերի սահմանման համար օգտվում են տնտեսությունում ընդունված տարիֆային ցանցից:

Ձեռքի կթի դեպքում կթվորի աշխատանքը դասվում է տարիֆային 4-րդ կարգում, տարիֆային դրույքը կազմում է 3200 դրամ:

Աշխատավարձի տարեկան ակորդային ֆոնդը հաշվարկելու համար տարիֆային դրույքը բազմապատկում ենք տարվա օրերի քանակով և բարձրացնում 50%-ով: Այսպիսով, կթվորի վարձատրության տարեկան ակորդային ֆոնդը կկազմի 1752000 դրամ ($3200 \text{ դրամ} \times 365 \text{ օր} \times 1.5$):

Կթվորը վարձատրվում է կթած կաթի և ստացված հորթերի համար: Ելնելով առանձին մթերքների աշխատատարությունից՝ նպատակահարմար է աշխատավարձի տարեկան ակորդային ֆոնդի 90%-ը /1576800/ դրամ վճարել կաթի արտադրման և 10%-ը՝ հորթի ստացման համար: Հետևաբար՝ 1 g կաթի վարձաչափը կկազմի 3376 դրամ (1576800 դրամ/467 g), իսկ մեկ գլուխ հորթի վարձաչափը՝ 13477 դրամ (175200 դրամ/13 գլուխ):

Այժմ կաթի արտադրության համար սահմանված վարձաչափը տարբերակենք ըստ մսուրային և արոտային շրջանների:

Ընդունելով, որ տնտեսությունում մսուրային շրջանում (200 օր) ստացվում է համախառն կաթի 45%-ը, իսկ արոտային շրջանում (165 օր) 55%-ը, հետևաբար մսուրային շրջանում կաթի արտադրությունը կկազմի 210 g ($467 \text{ g} \times 45/100$), իսկ արոտային շրջանում 257 g ($467 \text{ g} \times 55/100$):

Այնուհետև ստացված կաթի համար վճարվելիք տարեկան ակորդային ֆոնդը բաժանելով տարվա օրերի վրա ստանում ենք մեկ մարդ-օրվա հաշվով կաթի համար վճարվելիք վարձատրությունը, որը հավասար է 4320 դրամ ($1576800 \text{ դր}/365 \text{ օր}$):

Մեկ մարդ-օրվա հաշվով կաթի համար վճարվելիք վարձատրությունը բազմապատկելով առանձին ժամանակաշրջաններում (մսուրային և արոտային) օրերի քանակով և բաժանելով կաթի քանակի վրա՝ կստանանք տարբերակված վարձաչափը 1 g հաշվով: Այսպիսով, այն մսուրային շրջանում կկազմի 4114 դրամ ($4320 \text{ դր.} \times 200 \text{ օր} / 210 \text{ g}$), իսկ արոտային շրջանում 2773 դրամ ($4320 \text{ դր.} \times 165 \text{ օր} / 257 \text{ g}$):

Մեկ կթվորի փաստացի ստացված արտադրանքի համար աշխատավարձի հաշվարկը ցույց տանք օրինակով:

Ընդունենք՝ կթվորը հունիս ամսին ստացել է 50 g կաթ և 2 հորթ: Հետևաբար՝ կթվորին կաթի ստացման համար կվճարվի 138650 դրամ ($50 \text{ g} \times 2773 \text{ դրամ}$), իսկ հորթի ստացման համար 26954 դրամ

(2 հորթ x 13477 դրամ): Այսպիսով՝ կթվորի ընդհանուր աշխատավարձը հունիս ամսին կկազմի 165604 դրամ:

Ե/ Ոչխարաբուծությունում միավոր արտադրանքի (բուրդ, միս, կաթ) վարձաչափերի հաշվարկման կարգը

Ընդունենք, որ տնտեսությունում անասնապահ չորս հոգուց բաղկացած խումբը սպասարկում է 850 գլուխ մաքի: Նախատեսված է ստանալ 1000 գառ, 23 ց բուրդ (յուրաքանչյուր գլխից 2.7 կգ) և 255 ցենտ. կաթ (յուրաքանչյուր մաքուց 30.0 կգ):

Տարիֆային ցանցով հասանելիք աշխատավարձի օրական վճարը՝ 3600 դրամը (հովիվների աշխատանքը դասվում է տարիֆային 5-րդ կարգում) բազմապատկում ենք տարվա օրերի և աշխատողների թվով, այնուհետև արդյունքը բարձրացվում է 20%-ով:

Այսպիսով, հովիվների 4 հոգուց բաղկացած խմբի վարձատրության տարեկան ակորդային ֆոնդը կկազմի 6307200 դրամ (3600 դրամ x 365 օր x 1.2 x 4 հովիվ):

Ելնելով առանձին մթերքների արտադրության աշխատատարությունից, նպատակահարմար է աշխատավարձի տարեկան ակորդային ֆոնդի 60 %-ը վճարել բրդի, 30% գառների և 10% կաթի ստացման համար: Հետևաբար հովիվների աշխատավարձի տարեկան ակորդային ֆոնդից բրդի ստացման համար կհատկացվի 3784320 դրամ, իսկ գառների և կաթի ստացման համար՝ համապատասխանաբար 1892160 և 630720 դրամ:

Միավոր արտադրանքի վարձաչափերի հաշվարկման համար, արտադրանքի համար սահմանված վարձատրության գումարը բաժանվում է արտադրանքի քանակի վրա: Հետևաբար 1 ցենտ. բրդի վարձաչափը կկազմի 164535 դրամ (3784320 դրամ:23 ց), մեկ գառանը՝ 1892 դրամ (1892160 դրամ :1000 գառ), իսկ 1 ց կաթինը՝ 2473 դրամ (630720 դրամ : 255 ց):

Մինչև արտադրանքի ստացումը անասնապահների խումբը վարձատրվում է սպասարկվող գլխաքանակի հաշվով, ելնելով աշխատավարձի տարեկան տարիֆային ֆոնդից և գլխաքանակի սպասարկման ընդունված նորմայից: Հետևապես մեկ գլխի հաշվով ամսական վարձաչափը կկազմի 515 դրամ (3600 դրամ x 365 օր x 4 հովիվ : 850 գլուխ : 12 ամիս):

Ընդունենք տնտեսությունում անասնապահների խումբը սահմանված 850 գլխի դիմաց փաստացի սպասարկել է 900 գլուխ և ստացել է 26 ց բուրդ, 1100 գլուխ գառ և 270 ց կաթ: Մինչև վերջնական հաշվարկ կատարելը տարվա ընթացքում ըստ գլխաքանակի հովիվների խումբը վարձատրվել է 5562000 դրամ (515 դրամ x 900 գլուխ x 12 ամիս) չափով:

Ստացված արտադրանքի համար հասանելիք փաստացի աշխատավարձը բրդի ստացման համար կկազմի 4277910 դրամ (26 ց x 164535 դրամ), գառների ստացման համար 2081200 դրամ (1100 գառ x 1892 դրամ) և կաթի ստացման համար 667710 դրամ (270 ց x 2473 դրամ), այսինքն՝ հասանելիք աշխատավարձի ընդհանուր գումարը կկազմի 7026820 դրամ: Հետևապես հովիվների խմբի հասանելիք աշխատավարձի տարբերությունը կկազ-

մի 1464820 դրամ (7026820 դրամ – 5562000 դրամ), իսկ յուրաքանչյուր անասնապահի միջին ամսական աշխատավարձը՝ 146390 դրամ (7026820 դրամ : 12 ամիս : 4 հովիվ):

Վարձատրության այս համակարգն ունի թերություն, քանի որ կթվորի, անասնապահի աշխատանքի վարձատրության տարեկան տարիֆային ֆոնդը, անփոփոխ տարիֆային դրույքի դեպքում, մտնում է նույնը, նրա մոտ նվազում է շահագրգռվածությունը կաթնատվության, բրդատվության բարձրացման համար, քանի որ այս դեպքում փոքրանում է միավոր արտադրանքի վարձաչափը: Այդ պատճառով էլ խորհուրդ է տրվում սահմանել կայուն վարձաչափ մի քանի տարվա համար:

Թեմայի վերաբերյալ ստուգողական հարցեր

1. Որո՞նք են աշխատանքի վարձատրության գործառույթները:
2. Որո՞նք են աշխատանքի վարձատրության կազմակերպման հիմնական սկզբունքները:
3. Որո՞նք են տարիֆային համակարգի հիմնական տարրերը:
4. Աշխատանքների տարիֆավորման և տարիֆատրակավորման տեղեկատուների էությունը:
5. Տարիֆային ցանցեր:
6. Տարիֆային դրույքները:
7. Աշխատավարձի նկատմամբ գոտիական գործակիցները:
8. Աշխատանքի վարձատրության ձևերը և համակարգերը:
9. Ո՞ր դեպքերում է խորհուրդ տրվում կիրառել աշխատանքի վարձատրության ժամանակավարձային ձևը:
10. Ինչպե՞ս են հաշվարկում աշխատանքի վարձատրությունը պարզ գործավարձով:
11. Ինչպե՞ս են հաշվարկում աշխատանքի վարձատրությունը առաջադիմական գործավարձով:
12. Ինչպե՞ս են հաշվարկում աշխատանքի վարձատրությունը ակորդային համակարգով:
13. Ինչպե՞ս են հաշվարկում աշխատանքի վարձատրությունը ակորդապարզևատրային համակարգով:
14. Ինչպիսի՞ դրույթներ պետք է պահպանվեն աշխատանքի նյութական խթանման համակարգը մշակելիս:
15. Աշխատանքի վարձատրության կազմակերպումը բուսաբուծությունում:
16. Աշխատանքի վարձատրության կազմակերպումը անասնաբուծությունում:
17. Ղեկավար աշխատողների և մասնագետների աշխատանքի վարձատրությունը:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՃՅՈՒՂԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ԶՈՒԳԱԿՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հանրապետությունում ձևավորված գրեթե բոլոր գյուղացիական տնտեսությունները բազմաճյուղ են և այստեղ կարևորվում է ճյուղերի ռացիոնալ զուգակցումը: Ճյուղերը հնարավոր է զուգակցել, եթե նրանց մեջ կա տեխնոլոգիական և կազմակերպական կապ: Բերենք ճյուղերի հնարավոր զուգակցման մի շարք օրինակներ՝

- բանջարաբուծությունը լավ զուգակցվում է խաղողագործության և պտղաբուծության հետ՝ գյուղացիական տնտեսությունները կարող են միջվազային տարածություններն օգտագործել բանջարեղենի արտադրության համար,
- բանջարաբուծությունը կարելի է զուգակցել վաղահաս կարտոֆիլի հետ, քանի որ կարտոֆիլը լավ նախորդ է բոլոր բանջարեղենների համար,
- բանջարաբուծությունը լավ զուգակցվում է տավարաբուծության հետ,
- պտղաբուծությունը լավ զուգակցվում է մեղվաբուծության հետ՝ 1 հա 1-2 մեղվաընտանիք,
- պտղաբուծությունը կարելի է զուգակցել կաթնային և կաթնամսային տավարաբուծության հետ՝ 1 հա 1-2 գլուխ պայմանական խոշոր եղջերավոր անասուն,
- բանջարաբուծությունը, խաղողագործությունը և պտղաբուծությունը կարող են լինել որպես վերամշակող ձեռնարկությունների օժանդակ ճյուղ:

Առաջադրանք 1 Որոշել ուսումնասիրվող տնտեսության մասնագիտացումը համախառն արտադրանքի կառուցվածքով և մասնագիտացման խորության գործակիցը: Տնտեսությունը զբաղվում է միայն բուսաբուծությամբ, ունի 12 հա գյուղատնտեսական նշանակության հող, որից 5 հա 180 գ/հա միջին բերքատվությամբ խաղող՝ 14.0 հազար դրամ իրացման միջին գնով, մշակում է 3 հա 220 գ/հա միջին բերքատվությամբ լոլիկ՝ 8.0 հազար դրամ իրացման միջին գնով, 2 հա 250 գ/հա միջին բերքատվությամբ կարտոֆիլ՝ 12.0 հազար դրամ իրացման միջին գնով, 2 հա 35 գ/հա միջին բերքատվությամբ աշնանացան ցորեն՝ 13.0 հազար դրամ իրացման միջին գնով:

Մասնագիտացումը բնութագրող հիմնական ցուցանիշները համախառն և ապրանքային արտադրանքի կառուցվածքն են: Օրինակում տրված է տարվա ընթացքում տնտեսությունում արտադրված մթերքների քանակը՝ իրացման գներով, որոնց արտադրյալից կստացվի տնտեսության համախառն արտադրանքը: Առաջադրանքը կատարելու համար պետք է կազմել համախառն արտադրանքի կառուցվածքը ամփոփող աղյուսակ:

Համախառն արտադրանքի կառուցվածքը

#	Ցուցանիշները	Արժեքը, հազար դրամ	Տեսակարար կշիռը, %
1.	խաղող	12600.0	50.8
2.	լուլիկ	5280.0	21.3
3.	կարտոֆիլ	6000.0	24.2
4.	աշնանացան ցորեն	910.0	3.7
5.	ընդամենը	24790.0	100

Համախառն արտադրանքի կառուցվածքից պարզ դարձավ, որ տնտեսությունն ունի մեկ գլխավոր ճյուղ՝ խաղողագործությունը, քանի որ համախառն արտադրանքի կառուցվածքում զբաղեցնում է 50.8 %:

Տնտեսության մասնագիտացման խորության գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$K_c = \frac{100}{\sum Y_T (2n-1)}, \text{ որտեղ}$$

K_c – մասնագիտացման խորության գործակիցն է,

Y_T – յուրաքանչյուր արտադրատեսակի արժեքի տեսակարար կշիռն է ընդհանուր ապրանքային /կամ համախառն/ արտադրանքի մեջ՝ ըստ նվազման հաջորդականության,

n - յուրաքանչյուր արտադրատեսակի արժեքի տեսակարար կշռի հերթական համարն է ընդհանուր ապրանքային /կամ համախառն/ արտադրանքի մեջ՝ ըստ աճման հաջորդականության:

Մեր օրինակում՝

$$K_c = \frac{100}{50.8 (2*1-1)+24.2(2*2-1)+21.3(2*3-1)+3.7(2*4-1)} = 0.39$$

այսինքն՝ տնտեսությունն ունի մասնագիտացման միջին մակարդակ:

Թեման կարելի է ամփոփել ուսանողների հարցումով՝ նախօրոք մշակման համար հանձնարարելով հետևյալ հարցերը.

1. Ո՞րն է մասնագիտացման էությունը, տնտեսական բովանդակությունը և դրա վրա ազդող գործոնները:
2. Որո՞նք են մասնագիտացումը բնութագրող ցուցանիշները և ինչպե՞ս են որոշում մասնագիտացման մակարդակը:
3. Որո՞նք են գյուղատնտեսական ճյուղերի ռացիոնալ զուգակցման սկզբունքները և պայմանները:

ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Թեմայի շրջանակներում ներկայացված են բուսաբուծության հիմնական ճյուղերը և այդ ճյուղերում հանրապետությունում լայն մշակություն ունեցող հացահատիկի, կարտոֆիլի, ծխախոտի, պտուղների ու խաղողի, լոլիկի, վարունգի, առվույտի և այլնի մշակության տեխնոլոգիան:

Առաջադրանք 2 Բանջարաբուծության բաժնում առաջադրված սածիլների պահանջի հաշվարկի համար պետք է ուսանողներին ներկայացնել տորֆաբուսային թաղարներում սածիլների աճեցման մեթոդը: Սածիլների աճեցումը տորֆաբուսային թաղարներում նպաստում է փարթամ արմատային համակարգի զարգացմանը և սածիլների անվնաս փոխտնկմանը դաշտում: Թաղարները ունենում են $7 \times 7 \times 7$ սմ³ /կամ $8 \times 8 \times 8$ սմ³ /մեծություն: Բույսերի սածիլային և հետսածիլային զարգացումը, ինչպես նաև բույսի բերքատվությունը տորֆաբուսային թաղարներում աճեցված սածիլների մոտ ավելի բարձր է, քան սովորական աճեցրած սածիլները:

Առաջադրանքում պահանջվում է որոշել գյուղացիական տնտեսությունում պահանջվող սածիլների քանակը և ջերմոցի մակերեսը: Ջերմոցում սածիլները աճեցվում են $1 \text{ մ} \times 1.5 \text{ մ}$ շրջանակներում և, բացի շրջանակների զբաղեցրած տարածությունից, նախատեսվում է ջերմոցում անցուղի՝ պահանջվող տարածքի 15% չափով:

Նախ պետք է հաշվել 1 հա-ում պահանջվող սածիլների քանակը, որը որոշելու համար պետք է $1 \text{ հա} / 100 \text{ մ} \times 100 \text{ մ}$ բաժանել 1 սածիլի սնման մակերեսին: Սածիլի սնման մակերեսը ցույց է տալիս միջսածիլային և միջշարային տարածությունների արտադրյալը, որը կախված է մշակվող բույսի սորտի արմատային համակարգից:

Լոլիկի սածիլի սնման մակերեսը՝ $80 \text{ սմ} \times 25 \text{ սմ} = 2000 \text{ սմ}^2$ կամ 0.2 մ^2 ($1 \text{ մ}^2 = 100 \text{ սմ} \times 100 \text{ սմ}$), 1 հա-ի հաշվով կպահանջվի սածիլ՝

$$\frac{10000 \text{ մ}^2}{0.2} = 50000$$

Լոլիկի համար պահանջվող սածիլների ընդհանուր թիվը ստանալու համար 50000 հատին ավելացվում է 7500 հատ (ապահովագրական ֆոնդ 15%):

Նույն սկզբունքով էլ հաշվում ենք ջերմոցում սածիլների աճեցման համար պատրաստված շրջանակներում սածիլների քանակը: Շրջանակն ունի $1 \text{ մ} \times 1.5 \text{ մ} = 1.5 \text{ մ}^2$ մակերես, լոլիկի սածիլը աճեցվում է տորֆաբուսային թաղարում՝ $8 \times 8 \times 8$ սմ³, հետևաբար 1 շրջանակից կստացվի սածիլ՝

$$\frac{1.5 \text{ մ}^2}{0.0064 \text{ մ}^2} = 234$$

Պահանջվող շրջանակների թիվը ստանալու համար պետք է ընդհանուր

պահանջվող սածիլների քանակը բաժանել 1 շրջանակից ստացվող սածիլների քանակին:

$$\text{Լուլիկի համար} \frac{57500}{234} = 246$$

Այնուհետև գումարում ենք պահանջվող բոլոր շրջանակները՝

$$246 + 21 + 61 = 328 \text{ շրջանակ:}$$

Պահանջվող ջերմոցի մակերեսը կլինի՝

$$328 \times 1.5 \text{ մ}^2 = 492 \text{ մ}^2 \text{ միայն շրջանակների տեղադրման համար, որին էլ}$$

ավելացվում է անցուղի 15% չափով՝

$$492 \times 1.15 = 566 \text{ մ}^2:$$

աղյուսակ 1 /առաջադրանք 2/

Սածիլների և շրջանակների պահանջի հաշվարկը

#	Սնվարտի տեսակ	Սածիլի սնման մակերեսը դաշտում, սմ ²	1 հա հաշվով պահանջվում է սածիլ, հատ	Սնվարտի տարածությունը, հա	Պահանջվում է ընդամենը սածիլ, հատ	Ապահովագրական ֆոնդ 15%, հատ	Ընդամենը սածիլ, հատ	Սածիլի սնման մակերեսը ջերմոցի շրջանակում, սմ ²	1 շրջանակից ստացվում է սածիլ, հատ	Ընդամենը պահանջվում է շրջանակ, հատ
1	Լուլիկ	80X25	50000	1	50000	7500	57500	8X8	234	246
2	Կաղամբ	50X35	57143	0.2	11428	1714	13142	6X4	625	21
3.	Վարունգ	100X40	25000	0.5	12500	1875	14375	8X8	234	61

Խաղողագործության բաժնի խնդիրների լուծման համար ուսանողներին պետք է ներկայացնել խաղողի սորտերի կենսաբանական և տնտեսական գնահատման ցուցանիշները: Խաղողի սորտի կենսաբանական հատկություններից են.

1. հասունության ժամկետը,
2. ցրտադիմացկունությունը,

3. հիվանդությունների և վնասատուների դեմ դիմացկունությունը,
4. վազի աճի ուժը,
5. պտղաբերության գործակիցը,
6. պտղի միջին քաշը:

Ըստ տնտեսական նշանակության խաղողի սորտերը լինում են՝ սեղանի և տեխնիկական: Սեղանի սորտերի գնահատման ժամանակ հաշվի է առնվում ողկույզի արտաքին տեսքը, մեծությունը, ձևը, հատիկների խտությունը, չափը, ներկվածությունը, հյութալիությունը, փոխադրելիությունը, համը, բույրը: Սեղանի սորտերից են սպիտակ արաքսենին, դեղին և վարդագույն երևանիները:

Տեխնիկական սորտերի գնահատման ժամանակ գնահատվում է խաղողի շաքարայնությունը, հյութի թթվայնության պահպանումը և բնույթը, քաղցուի ելքը: Այս սորտերից են մսխալին, կանգունը, հաղթանակը, ոսկեհատը, գառան դմակը, լավարին:

Կան նաև ունիվերսալ սորտեր, որոնք օգտագործվում են և՛ որպես սեղանի, և՛ որպես տեխնիկական: Այդ սորտերից են Այվազյանի մուսկատենին, Անահիտը:

Խաղողի սորտերի տնտեսական գնահատման ժամանակ օգտվում ենք հետևյալ ցուցանիշներից՝ 1 հա հաշվով համախառն արտադրանքի և համախառն եկամտի ելքը, շահույթի ելքը, ինչպես նաև այգու հիմնադրման վրա ծախսերի փոխհատուցման ժամկետը:

Առաջադրանք 5 Տնտեսությունը նախատեսել է հիմնել 5 հա խաղողի այգի և ծախսերի փոխհատուցման ժամկետը հաշվելու որպես հիմնական ցուցանիշ պահանջվում է միջին բերքատվությունը: Տնտեսությունը միջին բերքատվությունը կարող է հաշվել՝ հիմք ընդունելով տվյալ տարածաշրջանի նույն սորտի խաղող մշակող 3 տնտեսությունների միջին բերքատվությունը:

- 1-ին տնտեսություն - տարածությունը 10 հա, բերքատվությունը 120 g/հա,
- 2-րդ տնտեսություն - տարածությունը 12 հա, բերքատվությունը 140 g/հա,
- 3-րդ տնտեսություն- տարածությունը 13 հա, բերքատվությունը 150 g/հա:

Երեք տարիների միջին բերքատվությունը կարելի է բարձրացնել ոռոգման գործընթացի բարելավմամբ՝ 3.5%-ով, պարարտացման նորմաների պահպանմամբ՝ 7.2%-ով, հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմամբ՝ 3.2%-ով, այգիների լիարժեքության ապահովմամբ՝ 10%-ով:

Միջին բերքատվությունը ցույց է տալիս միավոր հողատարածությունից՝ 1 հեկտարից ստացվող բերքի քանակը, այսինքն՝ տարվա վերջում ստացված համախառն բերքը պետք է բաժանել տարածության վրա:

$$\begin{aligned} & \text{Տնտեսություններում միասին ստացվել է համախառն բերք՝} \\ & 10 \times 120 + 12 \times 140 + 13 \times 150 = 4830 \text{ g} \end{aligned}$$

Միջին բերքատվությունը ստանալու համար պետք է այդ համախառն բերքը բաժանել ընդհանուր տարածությանը՝ $10 + 12 + 13 = 35$ հա վրա՝

$$\frac{4830 \text{ g}}{35 \text{ հա}} = 138 \text{ g/հա}$$

Տնտեսությունում նախատեսվում է կատարել որոշակի ագրոնոմիական միջոցառումներ՝ ոռոգում, պարարտացում, հիվանդությունների և վնասատուների դեմ լիարժեք պայքար այգում: Այս բոլոր գործընթացները կբարձրացնեն միջին բերքատվությունը:

Ոռոգման գործընթացի բարելավմամբ միջին բերքատվությունը կբարձրանա 3.5%-ով՝ $138 \text{ g/հա} \times 3.5\% = 4.83 \text{ g}$

Պարարտացման նորմաների պահպանման արդյունքում բերքատվությունը կբարձրանա՝ 7.2%՝ $138 \text{ g/հա} \times 7.2\% = 9.926 \text{ g}$

Հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմամբ՝ 3.2%՝ $138 \text{ g/հա} \times 3.2\% = 4.416 \text{ g}$

Այգիների լիարժեքության ապահովմամբ՝ 10%՝ $138 \text{ g/հա} \times 10\% = 13.8 \text{ g}$

Բոլոր միջոցառումների արդյունքում միջին բերքատվությունը կկազմի $138 + 4.83 + 9.926 + 4.416 + 13.8 = 171 \text{ g/հա}$

Առաջադրանք 7 Տալ խաղողի սորտերի տնտեսական գնահատականը հետևյալ ելակետային տվյալների հիման վրա, եթե տնտեսության բոլոր սորտերի համար ապրանքայնությունը 90% է:

Առաջադրանքում նախատեսվում է տալ մշակվող խաղողի սորտերից մինչև 5-ը ավելի արդյունավետը: Խաղողի սորտերի համեմատման համար պետք է հաշվարկել.

1. 1 g հաշվով շահույթի ելքը,
2. 1 հա շահույթի ելքը,
3. շահութաբերությունը:

1 g հաշվով շահույթի ելքը ցույց է տալիս միավոր արտադրատեսակի գնի և ինքնարժեքի տարբերությունը, իսկ հեկտարի հաշվով շահույթի ելքը ամփոփում է նաև մշակաբույսի միջին բերքատվությունը: Շահութաբերությունն ընդհանուր արտադրական գործընթացի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշն է:

Հաշվարկային աղյուսակում համախառն բերքը /g/ ստացվում է միջին բերքատվության և տարածության արտադրյալով: Իրացվող արտադրանքի քանակը որոշվում է ապրանքայնությամբ՝ համախառն բերքը բազմապատկելով ապրանքայնությամբ: Համախառն արտադրանքի արժեքը ստացվում է համախառն բերքի և 1 g իրացման գնի արտադրյալով, իսկ ապրանքային արտադրանքը կարող ենք ստանալ և՛ համախառն արտադրանքի արժեքը բազմապատկելով ապրանքայնությամբ, և՛ իրացված արտադրանքի քանակը բազմապատկելով 1 g իրացման գնով:

Սորտերը	Տարածությունը, հա	Միջին բերքատվությունը, ց/հա	Համախառն բերքը, ց	Իրացվող արտադրանքը, ց	1 ց-ի հաշվով, հազ. դր		Համախառն արտադրանք, հազ. դր	Ապրանքային արտադրանք, հազ. դր	Ստացվել է շահույթ, հազ. դրամ		Շահութաբերության մակարդակը, %
					Ինքնարժեքը	Իրացման գինը			1 ց հաշվով	1 հա-ի հաշվով	
N 1	10	180	1800	1620	9.8	14.0	25200	22680	4.2	756	42.8
N 2	8	165	1320	1188	10.3	14.0	18480	16632	3.7	610.5	35.9
N 3	4	170	680	612	10.0	14.0	9520	8568	4.0	680	40.0

Արդյունավետությունը բնութագրող առաջին ցուցանիշը՝ 1 ց հաշվով շահույթի ելքը կարող ենք ստանալ 1 ց իրացման գնի և ինքնարժեքի տարբերությամբ: 1 հա հաշվով շահույթի ելքը ստացվում է 1 ց-ից ստացված շահույթը բազմապատկելով 1 հա միջին բերքատվությամբ:

Շահութաբերությունը 1 ց շահույթի և 1 ց ինքնարժեքի հարաբերությունն է՝ արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների հաշվարկից հետո պետք է կատարել վերլուծություն՝ գնահատելով խաղողի սորտերը:

Ուսումնասիրվող սորտերից ամենաարդյունավետը N1 սորտն է, որի 1 ց և 1 հա ստացվող շահույթը ամենաբարձրն է, N3 սորտի համեմատությամբ այն գերազանցում է համապատասխանաբար 5% և 11%, իսկ N2 սորտի համեմատությամբ՝ 13.5% և 23.8%:

N1 սորտի մոտ բարձր է նաև շահութաբերությունը՝ N3 սորտի համեմատությամբ 2.8 տոկոսային միավորով և N2 սորտի համեմատությամբ՝ 6.9 տոկոսային միավորով:

Այս սորտի տնտեսական առավելությունը պայմանավորված է մնացած սորտերի համեմատությամբ ցածր ինքնարժեքով և բարձր բերքատվությամբ: Բերքատվությունը դա սորտային առանձնահատկություն է /պայմանավորված բազմաթիվ գործոններով/, իսկ ցածր ինքնարժեքը պայմանավորված է, որ ամբողջ այգու տարածության համար կատարվում են հավասար ծախսեր, սակայն մյուս սորտերի համեմատ ստացվել է բարձր բերքատվություն:

Առաջադրանք 8 Կատարել խաղողի նոր սորտերի տնտեսական գնահատում, դրանք համեմատելով ստուգիչ սորտի խաղողի տնտեսական ցուցանիշների հետ: Խաղողի բոլոր սորտերի համար կատարվում են նույն ծախսումները /պարարտացման, ոռոգման, բուժանյութերի և մյուս գործընթացների վրա կատարվող ծախսեր/, այն տարբերությամբ, որ այն սորտերի համար, որոնք ունեն ավելի բարձր բերքատվություն, քան ստուգիչ սորտն էր, կատարվում են մի քանի լրացուցիչ ծախսեր.

- ստուգիչ սորտի համեմատ ավել ստացված բերքը հավաքողների վարձատրություն - արտադրական նորման 3 g, 1 մարդ-օրվա վարձատրությունը՝ 3000 դրամ,
- ստուգիչ սորտի համեմատ ավել ստացված բերքը շարքերից տեղափոխողների վարձատրություն - -արտադրական նորման 6 g, 1 մարդ-օրվա վարձատրությունը՝ 3000 դրամ,
- այլ ծախսեր – նշված ծախսերի 5 %:

Խաղողի սորտերի տնտեսական գնահատումը պետք է տալ 1 հեկտարի հաշվով: Որպես ստուգիչ սորտ ընդունվում է սորտերից ամենամեծ տարածությամբ մշակվողը, եթե համեմատվող սորտերը տնկվել են միաժամանակ, հակառակ դեպքում՝ ընտրվում է որպես ստուգիչ սորտ նախկինում հիմնական սորտ համարվող խաղողը:

2-րդ սորտը ստուգիչ սորտի համեմատությամբ ունի ցածր բերքատվություն, հետևաբար չի կարող ստացվել լրացուցիչ շահույթ և այդ սորտի համար հաշվարկներ չեն կատարվում:

Ստուգիչ սորտի համեմատ ավել բերք ստացած սորտը հավաքելու համար կատարվում են լրացուցիչ ծախսեր.

բերքը հավաքողի աշխատավարձը.

1-ին սորտի համար $30 \text{ g}/3 \text{ g} = 10$ մարդ-օր, վարձատրությունը կկազմի՝
 10×3000 դրամ = 30000 դրամ:

3-րդ սորտի համար՝ $45 \text{ g}/3 \text{ g} = 15$ մարդ-օր
 15×3000 դրամ = 45000 դրամ:

Խաղողի բերքահավաքի ժամանակ երկու բերք հավաքողի կցվում է մեկ աշխատող՝ բերքը շարքերից տեղափոխող: Բերքը շարքերից տեղափոխողի աշխատավարձը կկազմի

1-ին սորտի համար $30 \text{ g}/6 \text{ g} = 5$ մարդ-օր
 5×3000 դրամ = 15000 դրամ:

3-րդ սորտի համար $45/6 = 7$ մարդ-օր
 7×3000 դրամ = 21000 դրամ:

Տնտեսությունում կատարված այլ ծախսերը հաշվարկում ենք կատարված լրացուցիչ ծախսերի 5 %-ի չափով.

1-ին սորտի համար՝ $(30000 + 15000) \times 5 \% = 2250$ դրամ

3-րդ սորտի համար՝ $(45000 + 21000) \times 5 \% = 3300$ դրամ:

Խաղողի սորտերի տնտեսական գնահատականը

#	Սորտերը	Միջին բերքատվությունը, ց/հա	Ստացվել է լրացուցիչ բերք՝ ստուգիչի համեմատ, ց	1 ց խաղողի իրացման գինը, հազ.դր	Լրացուցիչ բերքի արժեքը, հազ.դր	Լրացուցիչ բերքի հավաքման վրա կատարվող ծախսեր, հազ.դր	Լրացուցիչ բերքը շարքերից տեղափոխելու վրա կատարվող ծախսեր, հազ.դր	Այլ ծախսեր, հազ.դր	Ընդամենը լրացուցիչ ծախսեր, հազ.դր	Ստացվել է լրացուցիչ շահույթ, հազ.դր
1	Ստուգիչ	150	-	14.0	-	-	-	-	-	-
2	1-ին	180	+30	14.0	420.0	30.0	15.0	2.25	48.3	371.7
3	2-րդ	140	-10	14.0	-	-	-	-	-	-
4	3-րդ	195	+45	14.0	630	45.0	21.0	3.3	69.3	560.7

Առաջադրանք 9 Գյուղացիական տնտեսությունը տարվա ընթացքում կատարել է 340 հազար դրամ արտադրական ծախս և ստացել է 20 ց խնձոր: Նախատեսել է ստացված խնձորի կեսը վաճառել բերքահավաքից հետո, կեսն էլ պահել սառնարանային տնտեսությունում և վաճառել ձմռանը՝ բարձր գնով: Խնձորը պահելու համար սառնարանային տնտեսությանը 1 ց հաշվով պետք է տրվի վարձ՝ 5000 դրամ: Քանի որ սառնարանային տնտեսությունը ուսումնասիրվող գյուղացիական տնտեսությունից գտնվում է որոշակի հեռավորության վրա, խնձորը տեղափոխելու համար 10 ց հաշվով պահանջվում է 20000 դրամ ծախս: Խնձորի 1 կգ բերքահավաքից հետո վաճառվում է միջինը 300 դրամ, իսկ ձմռանը՝ 550 դրամ: Հաշվել, որքանով է արդյունավետ գյուղացուն խնձորը պահել և իրացնել ձմռանը, եթե սառնարանային տնտեսությունում պահվող խնձորի մոտ 10% փչանում է:

Խնձորի պահպանման և ձմռանն իրացման արդյունավետությունը

Իրացման ձևը	Արտադրանքի ծավալը, g	1 g հաշվով հազար դրամ			Մինչև իրացումը կատարվող 1 g ծախս, հազար դրամ	1 g իրացման միջին գինը, հազար դրամ	Ստացվել է շահույթ, հազար դրամ		Շահութաբերությունը, %	Ստացվել է լրացուցիչ շահույթ, հազար դրամ	
		Արտադրական ծախս	Տեղափոխման ծախս	Սառնարանի վարձ			1 g հաշվով	Ընդամենը		1 g հաշվով	Ընդամենը
Բերքահավաքից հետո	10	17.0	X	X	17.0	30.0	13.0	130.0	76	X	X
Պահպանումից հետո	9	17.0	2.0	5.0	24.0	55.0	31.0	279.0	129	18.0	149.0

Առաջադրանք 10 Հաշվել տավարաբուծական տնտեսության մսուրային շրջանի համար պահանջվող կերերի քանակը, եթե տնտեսությունն ունի 30 կով՝ 2800 կգ տարեկան միջին կաթնատվությամբ, տարվա ընթացքում ստացվել է ընդամենը քաշած՝ 76 g: Մսուրային շրջանը տևում է 7 ամիս, սակայն պետք է հաշվի առնել, որ արոտային շրջանում՝ 5 ամսում կենդանիների մթերատվությունը ավելի բարձր է և տարվա ընթացքում ստացված արտադրանքի 50% վերագրել մսուրային շրջանին: Կերի պահանջը հաշվարկել ըստ տավարի մթերատվության և արտադրանքի միավորի հաշվով կերամիավորների ծախսի /1 g կաթ ստանալու համար ծախսվում է 1-1.2 g կերամիավոր, 1 g քաշածի համար՝ 8-10 g կերամիավոր/: Մսուրային շրջանում տավարին կերակրում են օրվա սահմանված կերաբաժնով:

Կերերի պահանջի հաշվարկն ըստ տավարի մթերատվության և օրվա կերաբաժնի կառուցվածքի

#	Կերատեսակները	Օրվա կերաբաժնի կառուցվածքը, %	Կերատեսակից պահանջվում է, ց կմ	1 ց կերը պարունակում է, ց կմ	Ընդամենը պահանջվում է կեր, ց
1	կոշտ կեր, որից	70	592.2	*	*
	առվույտ	65	384.93	0.5	769.86
	սենաժ	10	59.22	0.3	197.4
	ծղոտ	25	148.05	0.3	493.5
2	հյութալի կեր, որից	15	126.9	*	*
	սիլոս	25	31.725	0.2	158.625
	կերի ճակընդեղ	75	95.175	0.12	793.125
3.	խտացրած կեր	15	126.9	1	126.9

Առաջադրանքի պայմաններից ելնելով՝ կերի պահանջը պետք է որոշենք ըստ կենդանիների մթերատվության և միավոր արտադրատեսակի համար պահանջվող կերամիավորների ծախսի: Տնտեսությունում կիրառվում է մսուրաարոտային պահվածքի համակարգ, կերի պահանջը պետք է հաշվել միայն մսուրային շրջանի համար, հետևապես ստացվող արտադրանքից պետք է առանձնացնել մսուրում ստացվող արտադրանքի քանակը՝ 50%:

Տարվա ընթացքում ստացվում է՝

կաթ – 30 կով x 2800 կգ = 840 ց, որից 420 ց մսուրային շրջանում,

քաշաճ – 76 ց, որից 38 ց մսուրում:

1ց կաթ արտադրելու համար կերամիավորների ծախսը վերցնենք 1.2 ց կմ, իսկ 1 ց քաշաճի հաշվով՝ 9 ց կմ:

Հետևաբար մսուրային շրջանում կպահանջվի՝

$420 \times 1.2 + 38 \times 9 = 846$ ց կմ:

Պահանջվող կերամիավորների քանակը պետք է բաժանել ըստ կերատեսակների՝ հաշվի առնելով օրվա կերաբաժնի կառուցվածքը: Նախ հաշվարկում ենք ընդհանուր պահանջվող կերատեսակների մեջ՝ կոշտ, հյու-

թալի և խտացրած կերերի բաժինը, այնուհետև յուրաքանչյուր խմբում՝ կերատեսակների բաժինը:

Յուրաքանչյուր կերատեսակի պահանջը հաշվելու համար պետք է այդ կերատեսակին բաժին ընկնող կերամիավորները հարաբերենք 1 ց կերատեսակում պարունակվող կերամիավորների վրա:

Կուլտուրական արոտարածեցման դեպքում ըստ արոտավայրի բերքատվության սահմանվում է անասունների օպտիմալ գլխաքանակ 1 հա հաշվով: Ինտենսիվ տնտեսություններում այս շրջանում արոտային կերերը լրացվում են խտացրած կերերով, որոնց պահանջը կարելի է հաշվարկել առաջին մեթոդով (ըստ գլխաքանակի և 1 գլխի օրվա նորմատիվի):

ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Թեմայի շրջանակներում անամնաբուժության ճյուղերի առանձնահատկությունները և տարբերությունները տեսանելի դարձնելու նպատակով կարելի է ճյուղերը՝ իրենց բնութագրող հատկանիշներով, ցույց տալ ամփոփ աղյուսակով:

Բնութագրող ցուցանիշները	Տավարաբուծություն	Խոզաբուծություն	Ոչխարաբուծություն	Թռչնաբուծություն
Մանագիտացված կազմակերպությունների արտադրական տիպերը	1. կաթնային 2. կաթնամսային 3. տոհմային	1. ավարտված ցիկլով 2. վերարտադրողական՝ տոհմային և ապրանքային 3. բտող	1. բրդային 2. բրդամսային 3. մաքրոյային 4. մուշտակային 5. գառնենի 6. մամառայային	1. թռչնաֆաբրիկաներ 2. ինկուբատորային թռչնաբուծական կայաններ 3. տոհմային
Աճեցման և բտման տեսակները	1. կաթնային 2. կաթնամսային 3. մսակաթնային 4. մսային	1. մսային 2. բեկոնային 3. ճարպային	1. կիսանրբագեղձ՝ մաքրոյակաթնատու 2. կիսակոպտաբույր՝ մաքրոյակաթնատու	1. ձկային 2. մսային 3. ձվամսային 4. տոհմային
Ծնի կազմակերպումը	1. համաչափ 2. սեզոնային	1. կլոր տարի 2. սեզոնային	1. գարնանային 2. ձմեռային կամ վաղ ծին 3. արհեստական սերմնավորում	1. ինկուբացիա 2. բնական ճտահանում

Անասնաբուծության համակարգերը	<ol style="list-style-type: none"> 1. արոտային 2. արոտանմուտային 3. մուտրաարոտային 4. մուտրային 	<ol style="list-style-type: none"> 1. մուտրային 2. կիրառվում է նաև արոտային պահվածք 	<ol style="list-style-type: none"> 1. ստացինար լեռնային՝ ֆերման և արոտը նույն բնական գոտում 2. երկգոտիական արածեցում 3. արոտախտոտարքային 	<ol style="list-style-type: none"> 1. մուտրային՝ թռչնանոցում
Անասունների պահվածքի եղանակները	<ol style="list-style-type: none"> 1. կապովի 2. անկապ՝ խորը չփոխվող ցամաքարով և բոքսերում 	<ol style="list-style-type: none"> 1. գրոսաբակային՝ ռեֆիմային և ազատ 2. ոչ գրոսաբակային 	<ol style="list-style-type: none"> 1. ազատ մուտրային, հիմնականում պահվում են արոտներում 	<ol style="list-style-type: none"> 1. հատակային 2. բակային 3. վանդակային
Սեռահասակային խմբերը	<ol style="list-style-type: none"> 1. կով 2. արտադրող ցուլ 3. երինջ 4. մինչև 4ամսական հորթեր՝ արու և էգ 5. 4 ամսականից մինչև սերմնավորման էգեր 6. 4 ամսականից բարձր ցուլիկներ 	<ol style="list-style-type: none"> 1. վարազներ 2. մերուններ՝ հիմնական և ստուգվող 3. մինչև 2 ամսական խոնկորներ 4. աճեցման և բտման տակ դրվող մատղաշ 	<ol style="list-style-type: none"> 1. մաքիներ 2. արտադրող խոյեր 3. շիշակներ 4. խոյիկներ 	<ol style="list-style-type: none"> 1. աքաղաղ 2. ածան հավեր 3. մասցու մատղաշ
Մթերատվությունը	<ol style="list-style-type: none"> 1. կաթ՝ 2800-3500 կգ 2. օրական բաշաճը՝ 400-500 գրամ 	<ol style="list-style-type: none"> 1. օրական բաշաճը՝ 600-700 գրամ 	<ol style="list-style-type: none"> 1. օրական բաշաճը՝ 170-200 գրամ 2. կաթ՝ 40-50 կգ 3. բուլր՝ 3-4 կգ 	<ol style="list-style-type: none"> 1. ձու՝ 280-300 հատ 2. բրոյլերը 5-7 շաբաթականում հասնում է 1.2-2 կգ
Կերի ծախսը միավոր արտադրանքի հաշվով	<ol style="list-style-type: none"> 1.1 գ կաթ – 1.0-1.2 գ կմ 2.1 գ բաշաճ – 8-10 գ կմ 	<ol style="list-style-type: none"> 1. 1 գ բաշաճ – 4-6 գ կմ 	<ol style="list-style-type: none"> 1.1 գ բաշաճ – 6-8 գ կմ 	<ol style="list-style-type: none"> 1. 1 գ բաշաճ – 1.8-2 գ կմ 2. 1000 ձու – 1.4-1.5 գ կմ

Գրականություն

1. Ագրարային քաղաքականության հիմնադրույթները: ՀՀ գյուղատնտեսության և պարենի նախարարություն: ՀՀ կառավարության որոշումը, թիվ 71, Երևան, 29 փետրվարի, 1996:
2. Կանոնադրություն բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին, 1991:
3. Հայաստանի Հանրապետության օրենքը սեփականության մասին, 1990:
4. Հայաստանի Հանրապետության օրենքը գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին: Երևան, Հայաստան, 1991:
5. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, 1991:
6. Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքները: //«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22 փետրվարի, 1991:
7. Հայաստանի Հանրապետություն, Կայուն զարգացման ծրագիր, Երևան, 2008
8. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրքը, 2002:
9. ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2004-2008թ.»: // Վիճակագրական ժողովածու, Երևան, 2009:
10. ՀՀ ԱՎԾ 'Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2008թ, Երևան -2009:
11. «Անդրկովկասի տարածաշրջանում ագրոպարենային համակարգի կայուն զարգացման հիմնախնդիրները»: //Միջազգային գիտաժողովի նյութեր, մաս 2-րդ, Երևան, 2002:
12. Ավետիսյան Ս.Ս. «Գյուղացիական տնտեսությունների մասնագիտացումը և չափերի օպտիմալացման հիմնահարցերը ՀՀ-ում»: //Գիտական հաշվետվություն, ՀՀ ԳԱԱ, Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ /ՀՀ ԳԱԱՏԻ/, Երևան, 2007:
13. Գսպոյան Գ.Մ. «Հայկական ՍՍՀ Գյուղատնտեսության բնական ռեսուրսների կոմպլեքսային գնահատումը» /պատ. խմբ. Լ.Ս.Մկրտչյան/, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1998:
14. Դավթյան Գ.Վ. - Ագրարային քաղաքականության կատարելագործումը շուկայական հարաբերությունների ձևավորման պայմաններում: // Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր, ամս. 7, Երևան, 1994:
15. Ծատուրյան Գ., Պերվիշինա Օ., Սեդրակյան Գ., Ղազարյան Է. - Հայաստանի գյուղատնտեսության մասնագիտացման որոշման մեթոդական մոտեցումները շուկայական էկոնոմիկային անցման պայմաններում: //ՀՀ գյուղատնտեսության և պարենի նախարարություն, Ագրարային քաղաքականություն և «Ագրոնոդել - 2000 ծրագիրը», թեզիսներ: Երևան, Գյուղ ԷԳՀԻ, 1995:
16. Համաշխարհային բանկի ուսումնասիրություններ, «Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի բարեփոխումների տեսություն», Երևան, «Հայ էդիթ», 1995:
17. Հայաստանի Հանրապետության հողային կադաստր, մաս 3, հողերի գնահատումը, Երևան, 1991:

18. Հայլբրոուն Ռ և Թարրու Լ. – Տնտեսագիտություն բոլորի համար, 1994.- էջ 255:
19. Ղազարյան Ս., Դավթյան Գ. – Գյուղատնտեսության զարգացման մի քանի հիմնահարցեր և դրանց իրականացման ուղիները: //Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / հանրապետական գիտաժողովի նյութեր/. Երևան: «Գիտություն» հրատ., 2009:
20. Ղազարյան Ս., Մկրտչյան Հ. – ՀՀ գյուղատնտեսության հողային ֆոնդի շարժընթացը և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները: // Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /հանրապետական գիտաժողովի նյութեր/. Երևան: «Գիտություն» հրատ., 2009:
21. Ղազարյան Ս., Ղազարյան Է. – Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնահարցերը: //Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /հանրապետական գիտաժողովի նյութեր/. Երևան: «Գիտություն» հրատ., 2009:
22. Լ.Մարգարյան, Ռ.Սիմոնյան «Աշխատանքի կազմակերպումը, նորմավորումը և վարձատրությունը ագրարային համակարգի ձեռնարկություններում»: Երևան 2005:
23. Ուս. ձեռ. «Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում» պրոֆ. Գ.Դավթյան խմբագրմամբ: Երևան, 2004:
24. Бакетт М. – Фермерское производство; Организация, управление анализа, глава 9, 10, М., 1989.
25. Макконнелл К.Р., Брю С.Р. – Экономикс, М., 1992.
26. Экономока – Уч. пособие под. ред. А.С.Булатова , М, 1996.
27. Экономика предприятий, под. ред. В.Я.Горфинкеля, Е.М.Купрякова, М., 1996. –374 стр.

Է.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ,
Լ. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Ա.Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ՖԵՐՄԵՐ

ԴԱՍԱԽՈՍԻ ՁԵՌՆԱՐԿ

Պատվեր՝ 1024: Տպաքանակ՝ 1000:
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում